



ՍՈՒՐԵՆ Ե. ՔՈԼԱՆՋՅԱՆ

(Պատմական գիտությունների
ընկերություն)

ՀԵԹՈՒՄ Բ-Ի ՁԵՌԱԳԻՐ ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՁԸ ԵՎ ՈՍԿԱՆՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ա.—Ո՞րն էր Ոսկան վարդապետ Երևանցու տպագրած Աստվածաշնչի օրինակը

Երեք դար է անցնում այսօր ոսկանյան Աստվածաշնչի տպագրությունից և ներկայումս հայ ժողովուրդը ամենուրեք նշում է այդ նշանակալից հոբելյանը, իր երախտագիտությունը մատուցելով բոլոր նրանց հիշատակին, ովքեր նախաձեռնել, տքնել, սատարել և վերջապես իրականացրել են այդ հսկա գործը, որը աննախընթաց երևույթ էր տվյալ ժամանակաշրջանի հայ տպագրության պատմության մեջ: Ոսկան Երևանցին առանց Աստվածաշնչի տպագրության իսկ անկասկած է, որ իր ծավալած տպագրական անխոնջ գործունեությամբ կարևոր տեղ կունենար մեր տպագրության տքնաջան գործիչների թվում: Սակայն Ոսկանի Աստվածաշունչը իր մեծ չափերի հասնող ծավալով, մաքուր, խնամված և ընտիր տպագրությամբ պատճառ եղավ նրան դասելու հայ տպագրության պատմության մեծագույն երախտավորների շարքում:

Մեր նպատակը, սակայն, այստեղ Ոսկան վրդ. Երևանցու տպագրական արվեստի մասին խոսելը չէ, քանի որ դրա մասին հայ տպագրության պատմության մասնագետներից շատերը անդրադարձել են անցյալում, իսկ ներկայումս էլ նույն հարցի շուրջ ուրիշներ են ասում իրենց խոսքը՝ ոգեկոչելով հիշատակը հայ մշակույթի անձնվեր դինավորյալին: Մեր ներկա հոդվածի նպատակը բոլորովին այլ է: Ցանկանում ենք մեր ուսումնական հարցի շուրջ, թե արդյո՞ք Ոսկան վարդապետ Երևանցին, իր Աստվածաշունչը տպագրելիս, ունեցել էր իր ձեռքի տակ և կամ հետևել էր մի ամբողջական Աստվածաշնչի ձեռագիր օրինակի, թե ընդհանուրապես, իրեն ուղեցույց ունենալով լատինական Աստվածաշնչի կանոնը, լատինական տեղերից վերցրել էր իր համար անհրաժեշտ գրքերը, իսկ պակաս մասերն էլ թարգմանել էր լատիներենից:

Ոսկանյան Աստվածաշնչի ձեռագիր օրինակի լուսաբանման հարցը կարևոր է հատկապես ճշտելու և ի հայտ բերելու համար այն բոլոր աշխատանքները, որ Ոսկանը կատարել է տվյալ բնագրի համեմատությամբ իր տպագրած գործում: Առաջին տպագրված Աստվածաշնչի իբրև հիմք օգտագործված ձեռագրի ինքնության ճշտումը անհրաժեշտ է նաև ցույց տալու համար այն բոլորը, որ նախ համընկնում է այդ օրինակին և միևնույն ատեն նշելու համար նաև բոլոր այն շեղումները, որ Ոսկան Երևանցին թույլ է տվել իր տպագրած Աստվածաշնչում: Եվ վերջապես, ոսկանյան Աստվածաշնչի նախագաղափար ձեռագրի օրինակի ի հայտ բերումը կարևոր է նաև Ոսկանի տպագրած Աստվածաշնչի ինչպես բովանդակության,



Սկզբնաթերթ Աստվածաշնչի

(Մատենադարան ձեռ. ու. 348, 1654—1660 թ. Կ. Պոլիս, ծաղկող՝ Մարկոս. գրված է Հակոբ Ի Զուղայեցու (1655—1680) համար, «ի Դուռն Սր. Լեւոնիանի, ի վայելումն Տէր Յակոբ ամենայն Հայոց կաթողիկոսի»)

այնպես էլ բնագրի և մի շարք հարակից այլ հարցերի պարզաբանման համար:

Եթե պրպտելու լինենք Ոսկան Երևանցու Աստվածաշնչում մանրակրկիտորեն դրված հիշատակարանները¹, դժբախտաբար այնտեղ որոշակի ոչ մի նշում չենք գտնի ասված սույն տպագրության իբրև հիմք ծառայած դրչադիր օրինակի մասին: Նույնպես Ոսկան Երևանցու կողմից 1669 թ. տպագրված Առաքել Դավրիժեցու Պատմության վերջում իր դեմոնիզմ արժեքավոր ինքնակենսագրության մեջ, թեև ամենայն մանրամասնությամբ խոսվում է Աստվածաշնչի տպագրության և նրա բովանդակությունը ամբողջացնելու ուղղությամբ կատարված աշխատանքների մասին, այնուամենայնիվ ոչինչ չի ասվում նախագաղափար օրինակի վերաբերյալ: Ոսկան Երևանցու ժամանակակիցների և հետագա մատենագիրների մոտ, ինչպես նաև մեղ հայտնի ձեռագրական հիշատակարաններում, դարձյալ ոչ մի ակնարկ չենք հանդիպում մեղ հետաքրքրող հարցի վերաբերյալ: Այսպես, լեհահայ հայտնի մատենագիր Ստեփանոս Ռոշքան իր ժամանակագրության մեջ մեծանուն տպագրիչի մահվան առթիվ նշելով Աստվածաշնչի տպագրության մասին, դարձյալ ոչինչ չի ասում նրա օգտագործած գրչագրի վերաբերյալ², Ոսկանի հայրենակից խաչատուր Զուղայեցին ևս, որ իր սքանչացումն էր հայտնում տպագիր առաջին Աստվածաշնչի մասին, դարձյալ լռություն է պահում մեր նշած հարցի շուրջ³:

¹ «Աստուածաշունչ: Նոյց և նորոց Կտակարանաց... Իսկ ղոյնի հրամանաւ Վեհափառին Տեառն Յակօբայ Հայոց Կաթողիկոսի ղլխակարողեալ և տնտեսալ ըսա Դադմատացոցն նաև ղհամաձայնութիւն հանուրց գրոց Աստուածաշնչից... Նուաստի ումեմն բանի Տեառն սպասաւորի Ոսկանի Երևանցոյ: ՅԱմստէրդամ, ներ Տպարանում սրբոյն էջմիածնի և սրբոյն Սարգսի. զօրավարի... 1666...», Առաջաբան—ընծայական և էջեր՝ 831—834:

² «Գիրք Պատմութեանց շարագրեալ վարդապետին Առաքելոյ Դավրէժացոյ... Տպագրեալ ներ Տպարանում Սրբոյն էջմիածնի և Սրբոյն Սարգսի զօրավարի... Եւ վերակացութեամբ Տեառն Ոսկանայ Երևանցոյ բանի սպասաւորի, յԱմսթէլօղամում... 1669 ին Տունվարի I...» էջեր՝ 629—638:

³ Տե՛ս Սահափանոսի Ռոշքայ ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք, հրտ. Հ. Համազասպ Ոսկան, Վիեննա, 1964, էջ 183—184:

⁴ Խաչատուր արեղայի Զուղայեցոյ, Պատմութիւն Պարսից (ԺԸ գար), Վաղարշապատ, 1905, էջ 121—122:

Թեև 1705 թ. Կ. Պոլսում Պետրոս Լատինացին⁴ նույնությամբ, իսկ 1733 թ. Վենեաիկում Մխիթար Արքան⁵ որոշ բնագրային սրբագրություններով, ամբողջությամբ վերահրատարակում են ոսկանյան Աստվածաշունչը, և որոնցից վերջինը ընդարձակ ծանոթություններ է տալիս առաջին հայերեն Աստվածաշնչի տպագրության և խմբագրման վերաբերյալ, սակայն նրանք դարձյալ չեն անդադառնում այն հարցին, թե հիշյալ Աստվածաշունչը ո՞ր գրչագրի հիման վրա էր լույս տեսել:

Որ Ոսկանը 1662 թ. Հայաստանից Եվրոպա ուղևորվելիս իր հետ անսլայման պետք է տարած լիներ Աստվածաշնչի մի գրչագիր օրինակ և կամ իր կողմից լատինական Վուլգատայի հետևողությամբ արտագրված մի ձեռագիր, այդ կասկած չի հարուցում: Նույնիսկ իրեն՝ Ոսկանի Աստվածաշնչի հիշատակարանների ուղագիր քննարկումը առնուղղակիորեն մեղ կռահել են տալիս հայկական մի օրինակի դոյություն մասին: Այդ հատկապես ղգալի է դառնում, երբ Ոսկանը ղուգահեններ է անցկացնում հայերեն և լատիներեն Աստվածաշնչերի միջև: Ոսկանը, Աստվածաշնչի տպագրության գործը ոգեշնչող Հակոբ Դ Զուղայեցի կաթողիկոսին իր գրած ընծայականում գրում էր. «... Վասն որոյ և մեք ո՛վ Հայր պատուական ըստ բարձրագունից հրամանաց քոց արարք ղլխատելով և տնտեսելով, ղհամարաթիւն ևս առնթքն նմի՝ գնելով բաղմաւ աշխատութեամբ, բանչի պատահեցաւ ուրեք առաւելութիւն ի մեքս և պակասութիւն ի նոսա, նոյնպէս անդրադարձութեամբ առաւելութիւն ի նոսա՝ և պակասութիւն ի մեքս...»: Եւ կամ մի այլ տեղում, խոսելով այն մասին, թե անտանելի գործ էր հայկական բնագիրը լատինականի հետ: Համաձայնեցնելը, դարձյալ մատնանշում էր, գրելով. «Զմեքայինն շարագրութիւն անխախտ պահել և ղղխատութիւնս և ղանատութիւնս ըստ թուոյ նոցա յօրինել...» և այլն, և այլն (ընդգծումները մերն են—Ս. Գ.)⁶:

Աստուածաշունչ: Նոյց և նորոց Կտակարանաց... Ի թաղաւորանիստ մայրաքաղաքն Ստամպոլ, ի թաղն Պէկօղլի կոչեցեալ 1705:

«Աստուածաշունչ Գիրք Նոյց և նորոց Կտակարանաց... Կարդեալ Տեառն Ոսկանայ վարդապետի Երևանցոյ և առաջնով տպագրութեամբ ի լոյս ածեալ... Աշխատասիրութեամբ և շանի Տեառն Մխիթարայ վարդապետի Սերաստացոյ՝ Արքա... Հայր կոչեցելոյ... 1733... ի Վէնէտիկ...»:

⁷ Տե՛ս Ոսկանի Աստվածաշունչը, Առաջաբան—ընծայական և էջ 831:



Մեր պատմական աղբյուրների և գրական-նության քննարկումը ավելի ճշգրիտ վկայություններ է մեզ ընձեռում Ոսկանի կողմից Եվրոպա տարված ձեռագիր մի օրինակի վերաբերյալ: Մանոթանանք այդ վկայություններից մի քանիսի հետ: Հ. Մ. Չամչյանը խոսելով լատին քարոզիչ Պողոս Պիրոմալիի մասին, գրում էր, որ վերջինս, երբ 1637 թ. էջմիածնից դարձյալ մեկնեց Հոռմ, «տարաւ ընդ իւր զձեռագիր Աստուածաշունչ մի հայերէն և կամելով տպագրել զնոյն ի յորդորելոյ ոմանց՝ ձեռն էարկ համեմատել ընդ լատինականին և փոփոխեալ ըստ հաճոյս՝ շանացաւ յարմարել զայն նմին՝ ըստ բանիցն և ըստ ոճոյ բառիցն և մատոյց առ կարդինալս ժողովոյն Փոփականտալու, զի տպագրեսցեն զայն զսրբագրեալն յիւրմէ, իսկ նոքա թէպէտև ունէին յառաջնմէ կամս, այլ ոչ վստահացեալ՝ թերևս ի սակս այլայլութեանցն եղելոց ի նմա՝ շառին յանձն»: Պիրոմալին լատին այն քարոզիչն էր, որ էջմիածնում եղած ժամանակ սկսեց լատիններենի դասեր ավանդել Ոսկան Երևանցուն, իսկ վերջինս էլ նրան էր հայերենի դասեր տալիս և նրանք միասին հաճախ թարգմանություններ էին անում այդ լեզուներից: 1642 թ. Պիրոմալին դարձյալ Հոռմից ուղարկվեց Փիլիպոս կաթողիկոսի մոտ, ուր ամենայն հավանականությամբ մնաց մի շաբաթ տարիներ և այստեղ էլ այս անգամ նա Ոսկանի հետ սկսեց համեմատել հայկական Աստվածաշունչը լատինականի հետ: Հ. Մ. Չամչյանը այդ մասին գրել է. Պիրոմալին «գտնել զՈսկան վարդապետ՝ խօսեցաւ ընդ նմա վասն սրբագրութեան Աստուածաշնչին (ընդգծումը մերն է—Ս. Ք.), յայնժամ վերըստին բաղդատութեամբ յաւելին երկոքին նոքա այլևս փոփոխութիւնս և խանգարեցին բազում ուրեք զվայելչութիւն շարադրութեանն, ուրեք ուրեք և զմիտս բանին, այլ ազգ իմանալով, և ահա այս այն է ըստ որոյ տպագրեաց յետոյ Ոսկան զԱստուածաշունչ իւր...»⁹:

Այսպիսով, վերոհիշյալ տողերից երևում է, որ երբ Ոսկանը Հակոբ Դ կաթողիկոսի հրամանով մեկնեց Եվրոպա, այնքան սպասված Աստվածաշունչը տպագրելու համար, նա իր հետ տարավ մի գրչագիր, որը Պիրոմալիի հետ սրբագրել էին հետևելով Վուլգատային:

Հ. Գ. Ջարրհանյանը ևս, անշուշտ, հիմնվելով Հ. Մ. Չամչյանի վերոհիշյալ տվյալների վրա, գրում էր, որ Աստվա-

ծաշնչի վրա Ոսկանը երկար ժամանակ աշխատանք էր թափել և Պիրոմալիի հետ սրբագրած ձեռագիր օրինակը իր հետ առած նա եկավ Արևմուտք՝ Աստվածաշունչը և այլ գրքեր տպագրելու համար¹⁰: Պատմաբան Լեոն գրում էր, որ Ոսկանը մեծ աշխատանք կատարեց Աստվածաշնչի վրա ոչ միայն իբրև տպագրող, այլև իբրև խմբագրող, լատիններենի հետ համեմատելով և սակայն ոչ մասերն էլ թարգմանելով¹¹: Մաղաքիա արքեպսկ. Օրմանյանը խոսելով Պիրոմալիի և Ոսկանի կողմից Աստվածաշնչի վրա կատարած փոփոխումների մասին, դարձյալ գրում էր, որ երբ կաթողիկոսի հրամանով Ոսկանը մեկնեց արտասահման՝ Աստվածաշունչը տպագրելու նպատակով, «Ոսկանի մեկտեղ առած օրինակը, վերը հիշված բռնադրոսեալ օրինակն էր»: Իր աշխատության շարունակություն մեջ Օրմանյանը արժարժեքով նախագաղափար օրինակի խնդիրը, կրկին հարց էր հարուցում, գրելով. «Չենք գիտեր թե այն՝ Փիրոմալիի հետ էջմիածնի մէջ կազմված օրինակն է, թէ ոչ անկէ ետքն ալ Ոսկան իւրովի ուրիշ փոփոխութիւններ ալ մտածած է, ավելցնելով կամ պակսեցնելով»¹²: Բանասեր Գարեգին Լեոնյանը հետևելով իր նախորդներին, ինքը ևս գրել է, որ «Հակոբ կաթողիկոսից եպիսկոպոսական աստիճան ստանալով՝ նա (իմա Ոսկանը—Ս. Ք.) ուղեվորովում է Եվրոպա իր հետ ունենալով Աստվածաշունչ գրքի մի ձեռագիր օրինակը. այնտեղ տպագրել տալու փափաքով»¹³:

Վերոհիշյալ փաստերից թեև մեզ հայտնի է դառնում, որ Ոսկանը իր հետ Եվրոպա է տարել իր կողմից սրբագրված մի գրչագիր, տպագրելի Աստվածաշնչի համար օգտագործելու նպատակով, սակայն տվյալ ձեռագիր ինքնության հարցը դարձյալ մեղ համար մնում է պարտրված մթոթյան քողով:

Սույն կարևոր հարցը մասամբ լուսաբանող թանկագին մի հիշատակարան ենք գտնում ոսկանյան Աստվածաշնչի տպագրության ավարտման տարին, այսինքն 1663 թ. դարձյալ Ոսկանի կողմից Ամստերդամի

⁹ Հ. Դ. Զարհանյան, Պատմութիւն Հայկական դպրութեան սկզբնաւորութիւնէն մինչ առ մեզ, Վենետիկ, 1895, էջ 107:

¹⁰ Լեո, Հայկական տպագրութիւն, առաջին հատոր 16—18 դդ., Թիֆլիս, 1904, էջ 267—268:

¹¹ Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ազգապատում, Բ հատոր, Մասն Բ, ք. տպագրութիւն բարեբարութեամբ պրն. Տաճատ Սրապեանի, Պետրոս, 1960, էջ 2539—2540:

¹² Գարեգին Լեոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 101:

¹³ Հ. Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց..., հատոր Գ, 1726, Վենետիկ, էջ 621:

տպարանից լույս տեսած նոր Կտակարանի վերջում, ուր ի միջի այլոց ասված է հետևյալը. «... Որոյ բուն նախագաղափար լեալ է, իմով ձեռամբ գծեալ նոր Կտակարանի զկնի Հեթմոյ թագաւորին Աստուածաշունչ սրբագրութեան գաղափար...»¹³։ Սակայն հիշյալ կարեւոր հիշատակարանը առաջին հերթին վերաբերում է նոր Կտակարանի բնագրին և ոչ թե Աստվածաշնչին, քանի որ վերջինիս մասին, ինչպես ասացինք, ոչինչ չի գրել Ոսկանը իր տպագրած Աստվածաշնչի հիշատակարաններում։ Համեմայն դեպս այն հարցը, թե ոսկանյան Աստվածաշունչը ևս կարող էր իբրեւ իրեն նախագաղափար ունենալ Հեթում Բ-ի ձեռագիր Աստվածաշունչը, երկար տարիներ շարունակ թեք ու դեմ կարծիքների տեղիք է տվել հայ բանասիրության մեջ։

Աստվածաշնչի շորորոգ տպագրութեան կատարող՝ Վենետիկի Մխիթարյան Միաբանութեան բազմահմուտ անդամներից Հ. Հ. Զոհրապյանը, որը իր մեծարժեք առաջաբանում անդրադարձել էր այս հարցին, գտնում էր, որ արքայական Աստվածաշունչը ոսկանյան հրատարակութեան հիմք ծառայելու վարկածը ճիշտ չէ, և որ այդ ասվել է հատկապես «պարզամիտների» աչքը շլացնելու համար, իսկ Ոսկանի օգտագործած ձեռագիրն էլ համարում էր ոչ ընտիր։ Ահա Հ. Հ. Զոհրապյանի խոսքերը. «Իսկ զոր կարծեցին ոմանք լինել այնմ թագաւորական օրինակ՝ իբր ի պէտս Հեթմոյ արքայի գրեալ, որով և յաշս պարզամտաց ոմանց նախամեծար պատուէր ազնուութեամբ, թուի թէ վերջին յիշատակարանն ոտանաւոր նորա պատճառս ետ այսպէս համարելոյ նոցա, որովհետև ոչինչ յիշէ Ոսկան զայսմանէ, որպէս և ոչ զայլ ևս հանգամանաց բնաւ այնմ գաղափարի»¹⁴։

Ինչպես կարելի է հետևել, արքայական Աստվածաշունչը ոսկանյան տպագրութեան իբրեւ օրինակ ծառայելու կասկածը բանասիրության մեջ առաջացել է Ոսկանի Աստվածաշնչի վերջում Հեթում Բ-ի բանաստեղծութեան առկայութեամբ, ինչպես նաև անշուշտ նոր Կտակարանի վերջում բերված վերոհիշյալ հիշատակարանի տողերից։

¹³ «Նոր Կտակարան Սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», ՅԱՄԲԷԼԵՍՏԱՄԻՈՒԹ Ի Թուրքի Գրկչին 1668 փետրվարի 10..., էջ 933—934։

¹⁴ «Աստուածաշունչ մատենա Հին և Նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի Հելլենական հաւատարմագոյն բնագրէ ի Հայկական բարբառ...», 1805 (միհատորյակ), Վենետիկ, առաջարան, էջ 7։

Հ. Հ. Զոհրապյանի հիշյալ կարծիքից շուրջ 100 տարի անց՝ 1902 թ. էջմիածնի բազմահմուտ միաբաններից Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը (այն ժամանակ վարդապետ) «Աստվածաշունչի նոր հրատարակութունը» խորագրով իր արժեքավոր հոդվածում խոսելով Հ. Հ. Զոհրապյանի կողմից Ոսկանի հասցեին առհասարակ թույլ տրված խիստ քննադատությունների մասին, գտնում էր, որ Ոսկան Երևանցու ձեռքի տակ եղած գրչագիրը պետք է որ այն ժամանակ Մայր Աթոռի Մատենադարանում գտնվող Հեթում Բ հայոց թագավորի պատվերով դրված Աստվածաշունչը լիներ, և որի վրա, նրա ասելով, երևում էին մի այլ ձեռքով կատարված ուղղումներ և տնահամարներ, և որոնք ըստ իր կարծիքի պետք է պատկանեին Ոսկանին¹⁵։

Հիշյալ խիստ ուշագրավ հաղորդումից հետո, պետք էր կարծել, որ հայ բանասիրությունը հետագա տարիների ընթացքում պիտի զբաղվեր այս խնդրով և մանրակրկիտ համեմատությունների միջոցով պիտի վերջնականապես ճշգրտեր ոսկանյան հրատարակության իբրեւ օրինակ ծառայած ձեռագրի հարցը։ Սակայն սույն խնդիրը ցավոք սրտի մատնվեց անուշադրութեան, և դրա հետևանքով էլ մինչև օրս էլ նա իր դրական լուծումը չգտավ հայագիտության մեջ։

Նույն 1902 թ. ձեռագրագետ և հայ Աստվածաշնչի մասնագետ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը խոսելով Հեթում Բ-ի ստացած Աստվածաշնչի մասին ոչինչ չի ասում վերջինս Ոսկանի կողմից իբրեւ օրինակ օգտագործվելու վերաբերյալ։ Նույնպես նա անդրադառնալով նաև Ոսկանի Աստվածաշնչի կանոնին և նրա կատարած թարգմանություններին, դարձյալ լռությամբ է անցնում վերոհիշյալ հարցի կողքով¹⁶։

Տարիներ անց, երբ Հ. Սահակ Կոզյանը դրում էր Մակաբայեցվոց Բ գրքի հայերեն թարգմանության մասին իր ուսումնասիրությունը՝ հիմնվելով Կ. վ. Տեր-Մկրտչյանի վերոհիշյալ հոդվածի վրա, գտնում էր, որ Ոսկանի տպագրությունը Հեթումի ձեռագրի ներկայացուցիչն է¹⁷։ Եթե այդ միտքը հեղինակի կողմից խնդրո առարկա դարձած Մակաբայեցվոց Բ գրքի վերաբերյալ մասամբ ճիշտ էր (մասամբ ենք ասում, քանի որ

¹⁵ «Արարատ», Վաղարշապատ, 1902, էջ 1070—1071 և 1073։

¹⁶ Месроп Тер-Мовсесян, История перевода Библии, на армянский язык, Петербург, 1902 г.

¹⁷ Դկա. Հ. Սահակ Կոզյան, Մակաբայեցվոց Բ գրքին հայերեն թարգմանությունը, Վիեննա, 1923, էջ 2—3։



ձեռագրի այս մասում էլ նկատվում են հետագա հավելումներ տառերի և երբեմն նաև բառերի), սակայն եթե այս միտքը փորձենք տարածել ամբողջ ձեռագրի վրա, այդ ճիշտ լինել չի կարող, քանի որ ինչպես հետագայում տեսնելու ենք մեր համեմատություններից, թեև Ոսկանը հենվել է մեկ ձեռագրի վրա, սակայն նրա բազմաթիվ էջերում կատարել է բնագրային մեծ թվով ուղղումներ և երբեմն նաև հավելումներ, որոնք չէին կարող շանդրադառնալ արքայական գրչագրի բնագրի փոփոխման վրա:

Մեր սույն հոդվածը գրեթե ավարտված էր, երբ վերջերս ստացվեցին Երուսաղեմի Հայոց Պատրիարքության պաշտոնաթերթ «Սիոն» և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկ» ամսագրերի բացառիկ համարները նվիրված Ոսկանյան Աստվածաշնչի 300-ամյա հոբելյանին, որոնցում լույս տեսած մի շարք հոդվածներում խոսվելով հանդերձ Ոսկանյան Աստվածաշնչի մասին, նրան իբրև օրինակ ծառայած գրչագրի հարցը դարձյալ չի արծարծվել և չի լուսաբանվել: «Սիոն»-ի հարգելի խմբագիր Արա Գալաթյանը Ոսկանի կյանքին և գործունեությանը նվիրած ուշագրավ հոդվածում, դարձյալ նշել է, որ Ոսկանը իր հետ պետք է որ մի ձեռագիր Աստվածաշնչի տարած լինելը Ամստերդամ, Վալյա իբրև օրինակ գործածելու համար տպագրության պարագային», և որը Պրոմալիի հետ նախապես սրբագրել էին¹⁸: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Հոգևոր Ծննդաբանի տեսուչ և «Հասկ»-ի խմբագիր Տ. Գարեգին Եպիսկոպոսը Սարգիսյանը «Հասկ»-ում իր հրատարակած արժեքավոր հոդվածում մասամբ փորձում է հարց հարուցել Ոսկանյան Աստվածաշնչի նախագաղափար օրինակի շուրջ: Հոդվածագիրը խոսելով Ոսկանի Աստվածաշնչի բնագրի մասին և կանգ առնելով գրքի ցանկերի վերջում հրատարակված ընդարձակ տաղաչափյալ մի գրվածքի վրա, որը Ոսկանի կողմից խորագրվել է «Ուտոնալոր բարեպաշտի թագաւորին Հայոց Հեթմոյ», իրավացիորեն գտնում է, որ նրա «նեերկայութիւնը այստեղ զարմանալի կթվի առաջին հերթին»: Սակայն Գեր. հոդվածագրի պատճառաբանությամբ «Միակ. պատճառը որով կարդարանա անոր տպագրութիւնը այստեղ այն է, որ հայ արքայի մը ինքնագիր հիշատակարան մըն է ան Ս. Գրոց ձեռագիր բնագրի մը: Արքան Ս. Գիրքին մեջ գտած է իր

տառապյալ հոգիին մխիթարութիւնը»: Իսկ մյուս արդարացուցիչ հանգամանքը Հեթմոյի ոտանավորի հրատարակության հետևյալն է կարծում. «Ոսկան Զատկի թվականի սխալմունքի մը մասին կխօսի, որ պատահած է 1668-ին: Այս ալ պատճառներն մեկը պետք է ըլլա Հեթմոյ թագավորի ոտանավորը, որուն կարևոր մեկ մասը Զատկի թվականի մասին է, մեջ բերելու իր տպագրած Աստվածաշնչին մեջ»¹⁹: Անշուշտ հիշյալ պատճառաբանություններով հնարավոր չէր արդարացնել Հեթմոյ Բ-ի բանաստեղծության առկայությունը Ոսկանի Աստվածաշնչում, պետք էր այն փնտրել ավելի կարևոր և որոշող հանգամանքների մեջ: Ահա այդ է պատճառը, որ նույն հոդվածագիրը՝ Գեր. Գարեգին Եպիսկոպոսը, ինք ևս անշուշտ չբավականանալով հիշյալ պատճառաբանություններով, ծանոթագրության բաժնում իրավացիորեն գրում է. «Կարծեք բաղդատել Ոսկանի բնագիրը վերոհիշյալ գրչագրին հետ (իսկ Հեթմոյի ոտանավորը պարունակող ձեռագիր Աստվածաշնչի հետ—Ս. Ք.): Արդյո՞ք Հեթմոյ արքայի օրինակը հիմք ծառայած է Ոսկանի տպագրության»²⁰:

Ոսկան Երևանցին իր տպագրած Աստվածաշնչի վերջում հրատարակելով Հեթմոյ Բ Հայոց թագավորի բանաստեղծությունը, նկատի էր ունենում ոչ այնքան նրա Աստվածաշնչի վերաբերյալ և կամ Մոսկովայի շուրջ հայոց մի արքայի կողմից գրված լիներու հանգամանքները, այլ հիմնականում այն զետեղում էր իբրև օրինակ ծառայած արքայական Աստվածաշնչի, անբաժնելի մասը կազմող ստացող արքայի՝ չափածո պատմական հիշատակարան:

Ինչպես երևում է վերոհիշյալ իրար հաջորդ վկայություններից, սկսած Հ. Մ. Զամչյանից մինչև այսօր Ոսկանյան Աստվածաշնչի նախագաղափար օրինակի հարցի շուրջ հայ բանասիրության մեջ տիրել է թեթև ու դեմ և երբեմն էլ բոլորովին անորոշ կարծիքներ և այս առեղծվածը մինչև օրս էլ իր վերջնական լուծումը չի գտել: Ուստի անհրաժեշտ էր, վերջնականապես պարզաբանելու համար այնքան ձգձգված սույն խնդիրը, Մաշտոցյան Մատենադարանի հնագույն ձեռագիր Աստվածաշնչերում և ներառյալ Հեթմոյ Բ-ի ստացած Աստվածաշնչում, որոնք ունենալիս տպագրության հետ համընկնող փոփոխումներն ու սրբագրությունները:

¹⁸ Արա Գալաթյանը, Ոսկան Երևանցի հայ տպագրության մեծ եխատարրը. «Սիոն», Երուսաղեմ, 1966, № 2—3, էջ 95:

¹⁹ Գարեգին Եպիսկոպոս, Ոսկանյան Աստվածաշնչում, ակնարկ բնագրին վրա, «Հասկ», Անթիլիաս, 1966, № 3—5, էջ 148 և ծնթ. 14—15:

²⁰ Նույն տեղում:

Այս առթիվ մեր կատարած պրպտումները ի վերջո դարձյալ կանգ առին Հեթում Բ-ի պատվերով դրված Աստվածաշնչի վրա, որի մանրադնին համեմատությունը ոսկանյան հրատարակության հետ ցույց տվեց, որ վերջինս կրում է ձեռագրում կատարված հետագայի փոփոխումների ճնշող մասը:

Հեթում Բ-ի գրչագիրը մեր սակավաթիվ այն հնագույն ձեռագիր Աստվածաշնչերից է, որը սկզբից մինչև վերջ ունի գլուխների բաժանումներ՝ կատարված լատինական Վուլգատայի հետևություններով: Հաճախ նրա էջերին երևում են կարմիր թանաքով դրված Ֆր[անկաց]ա, Ֆ[րանկաց] ր և այլն և կամ այլ տիպի նշումներ, ինչպես «Գիրք Յեսուայ որդու Նաեայ»-ի մեջ դրված է. «Ֆրանկ համարն յայս գլուխս ԻԴ»²¹, կամ Հուսթի սկզբի ստորին լուսանցքում՝ «Յայս գլուխս Ֆո[րանկաց] համարն Դ—է»²² և այլն: Հավանական է կարծել, որ կարմիր թանաքով ձեռագրում կատարված հիշյալ գլխահամարները և նշումները պատկանում են ձեռագրի պատվիրատու Հեթում Բ-ին, որը ձեռագրի ավարտման տարին (1295 թ.) առանձնացած Ֆրանչիսկյան վանքում լրացվում էր սրբազան գրքերի ուսումնասիրությամբ: Այսպիսով, Ոսկանը իր տպագրելի գործին նախագաղափար որոնելիս, ամենից հարմարը այս ձեռագիրն էր համարել, քանի որ այն ոչ միայն Աստվածաշնչի արքայական ձեռագիր էր, այլև ընտիր գրչություն ունեցող և բովանդակությամբ ամենալիակատար օրինակներից մեկն էր, միաժամանակ, ինչպես նշեցինք, այն ուներ նաև լատինական Վուլգատային հատուկ գլխակարգություն, մի բան, որ Ոսկանը ևս Հակոբ Դ կաթողիկոսի հրամանով պետք էր նույնը անել իր հրատարակելի Աստվածաշնչում: Ձեռագրի վրա երևում են այլ թանաքով հետագայում արված մեծ թվով սրբագրություններ և հավելումներ, որոնք ապա նկատի են առնված ոսկանյան հրատարակության մեջ:

Ոսկանյան Աստվածաշնչի օրինակի հարցը փաստական և միևնույն ժամանակ վերջնական կերպով լուծված համարելու ցանկության մեր ներկա հոգվածի հաջորդական մասերում առանձին-առանձին կանգ ենք առնելու ինչպես արքայական ձեռագիր Աստվածաշնչի հանգամանքների նկարագրության, այնպես էլ մի կողմից այս վերջինիս և մյուս կողմից ոսկանյան հրատարակության բովանդակության, ինչպես նաև նրանց բնագրային առնչակցությունների վրա:

Բ. Հեթում Բ-ի արքայական Աստվածաշնչը

Հայոց Հեթում Բ (1289—1301 թթ.) թագավորի պատվերով գրված Աստվածաշնչը այժմ կրում է Մաշտոցյան Մատենադարանի հայկական ձեռագրերի ժողովածուի 180 համարը (նախկինում ըստ Կարենյանց ցուցակի՝ № 151 և ըստ էջմիածնի հին համարի՝ 157): Այն բաղկացած է 564 թերթից և գրված է լավ հղկված նուրբ սպիտակ մագաղաթի վրա: Թերթերի մեծությունն է՝ 15,8×22,2×9 (կաղմով միասին): Ծրկայուն է և գրված է ընտիր մանր բուրձրագրով: Տոգերի ֆանակն է՝ 50—52: Կաղմով՝ կաշկալատ տախտակ դրոշմադարձ. կաղմի առաջին երեսին ոսկեգույնով դրոշմադարձված է Մարիամ Աստվածածինը շրջապատված չորս հրեշտակներով, իսկ երկրորդ երեսին՝ Հիսուսի խաչելությունը, որի ներքևում կանգնած են՝ մի կողմում՝ Մարիամ Աստվածածինը, իսկ մյուս կողմում՝ հավանաբար Հովհաննես ավետարանիչը:

Մանրանկարչություն—Ձաղագրություն.— Ընտիր դործ, իշխում է ոսկին: Մեծ կիսախորաններ՝ Աստվածաշնչի սկզբում՝ Մենդոց գործի վերին մասում (1ա), և ապա «Գիրք Յեսուայ որդու Նաեայ»-ի սկզբում (97բ): Փոքր կիսախորաններ՝ Բաղմաթիվ են և գտնվում են գրքերի և հաճախ գլուխների սկզբներին: Լուսանցագրեր՝ բաղմաթիվ են, հաճախ բուսական և կենդանական մոտիվներով, կան նաև մարդարենների դիմանկարներով դարձրվածներ: Ձաղագրեր՝ Մեծ թվով, կենդանական և բուսական մոտիվներով, գլուխների սկզբում: Մանրանկարներ՝ Ավետարանիչների (453բ, 465բ, 486բ) ուրվագծերով միայն, լուսանցադարձի տեղ հաճախ մարդարենների դիմանկարներ են նկարված: Գլխատառերը և այլ մեծատառեր և պատվագրված ԱԾ, ինչպես նաև ՏՐ ԱԾ, ՅՍ, ՔՍ, իրենց հոլովումներով գրված են ոսկով: Օգաագործված գույներ՝ ոսկի, կարմիր, կապույտ, վարդագույն և այլն:

Մեր.— Ձաղագրությունը և մանրանկարչությունը ուղե-տեղ նմանություններ ունի Կիլիկյան Հայաստանի համրավաժող մանրանկարիչ Թորոս Ռոսլինի և կամ նրա դպրոցին վերադրված և Մաշտոցյան Մատենադարանում պահվող 1286 թ. դարձյալ Կիլիկյանում ընդօրինակված Ճաղց գրքի հետ (Մատ. ձեռ. № 979), որի ստացողը դարձյալ Հեթում Բ-ն է:


Ժամանակ՝ Ձեռագիրը ավարտվել է ԶԽԴ թվականին (1295 թ.):

Մեր. Մեսրոպ Եպիսկ. Տեր-Մովսիսյանի կարծիքով ձեռագրի ընդօրինակությունը պետք է որ սկսված լիներ 1292 թ.²³,

²¹ Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 180, էջ 97ր:

²² Նույն տեղում, էջ 119ա:

²³ Месроп Тер-Мовсисян, նշված աշխատությունը, էջ 118:





Մատենադարանի ձեռ. № 180

Հեղում Բ թագավորի Աստվածաշնչի սկզբնաթիղջը (1295 թ., Կիլիկիա, գրիչ՝ Ստեփանոս)

Գրիչ՝ Ստեփանոս²¹, Մաղկող՝ անհայտ, հավանաբար գրիչը: Ստացող՝ Հայոց Հեթում Բ արքան: Վայր՝ Կիլիկիա:

Հիշատակարան-հիշատակագրություններ. — Ձեռագիրը թեև շունի գրչի ընդարձակ հիշատակարան, սակայն տեղ-տեղ գրիչ Ստեփանոսը թողել է միայն հիշատակագրություններ, ուր հաճախ հիշում է պատվիրատու Հեթում Բ արքային և իրեն: Այստեղ մեջ ենք բերում նրանցից ամենակարևորները:

Ա.

47բ Զբարեպաշտ արքայի Հայոց ղեկավարող Սատուծոյ բարձրացուցանալուն և զվարժեալն ամենայն իմաստութեանց յիշման արժանի արարէք զսա ո՛վ որ ընթեռնոյք զսա կամ արինակէք, զի ստացաւ զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց յաստիս և յապառնումն:

Նաև զիս զկարկամեալս մեղաւք զՍտեփանոս զգրող սորա և զծնողսն իմ և զզարմն մի մոռանայք, այլ յիշեցէք գի յոյժ աշխատեցայ ի գրելն սորա և Աստուած յիշողք յիշէ ամէն:

Բ.

286ա Զստացող Սուրբ Մատենիս զբարեպաշտ Թագաւոր մեր ղեկավար և զծնողսն իւր յիշեցէք ի սուրբ աղաթս ձեր: Նաև զիս ղմեղաւք լցեալ զգրող սորա զՍտեփանոս և զծնողսն իմ և զզարմն:

Գ.

306ա Զանպիտան գրիչս և զմեղաւք լցեալս զՍտեփանոս աղաչեմ յիշել, ո՛հ:

Դ.

433ա Մեղայ Տեառն Աստուծոյ ես Ստեփանոս:

Ե.

464բ Ով դասք Սուրբ Լուսերամից որք ընթեռնոյք զսա կամ արինակէք, յիշեցէք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաթս ձեր զստացաւ սորա զամենաւրհնեալ և

²¹ Գրեթէ վ. Հովսեփյանցը (ապա կաթողիկոս) կարծում էր, որ վերահիշյալ Ստեփանոսը նշանավոր Ստեփանոս Գոյնբրիցանցն է (Տե՛ս նրա «Քարտէզ հայ հնագրութեան», «Շողակաթ» Ս. Էջմիածնի, Հայագիտական ժողովածու, գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 208), Սակայն Ստեփանոս Գոյնբրիցանցի Աստվածաշնչի (Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 179, գրված 1292 թ.) մասնակի համեմատությունը վերահիշյալ Ստեփանոսի ընդօրինակած Հեթում Բ-ի գրչագրի հետ մեզ բերեց այն համոզման, որ նրանք թեև համանուն, սակայն տարբեր գրիչների գործեր են:

բարեպաշտ արքային Հեթում հանդերձ ամենայն զարմիւք կենդանիւք և մեռելովք: Նաև զիս զսեպեցեալս և զկաշկանդեալս մեղաւք զՍտեփանոս զգրող սորայ յիշեցէք և զծնողսն իմ և Աստուած զյիշողք յիշէ ամէն:

Զ.

497բ Ով տէր իմ արքայ Հեթում, աղաչեմ յիշեալ ի սուրբ աղաթս քո զմեղաւոր գրող սորա զՍտեփանոս ըղծերացեալս մեղաւք, զի յոյժ աշխատեցայ ի գրելն սորա, մանաւանդ ի ցանկերս կարի խիստ աշխատեցայ:

Է.

515ա Ով տէր իմ Յիսուս պահեա զմեղաւորս զՍտեփանոս:

Ը.

518ա Զանպիտան և զմեղաւոր հողս զՍտեփանոս գրիչ աղաչեմ յիշել անմոռաց ի սուրբ յաղաթս:

Թ.

561բ Աւրհնութիւն որ կարդայ, Գովութիւն որ լսէ, Փառք տուաւդին և յիշատակ գրիչս Ամէն, թուակ[անին] ԶԽԴ դրեցաւ (1295 թ.):

Ժ.


561բ—562ա (Անխորադիր բանաստեղծությունն ձեռագրի ստացող Հեթում Բ թագավորի)

Սկիզբ.— Որ ծառայեալս եմ բիւր խաւեց Կապեալ տոռամբ շար շրդթայից...

Վերջ.— Միշտ և յաւետ և յապառնում, Զերիսն ի մի բնութեան նոյնում:

Մեր.— Տե՛ս հրատարակված Ոսկան Երեանցու Աստվածաշնչում, էջ 829—830, և որը նա վերնագրել է. «Ուտնաւոր բարեպաշտի թագաւորի Հայոց Հեթումայ: Արտատպվել է նաև Պետրոս Լատինացու 1705 թ. 4. Պոլսում տպագրած (էջ 645—646) և Մխիթար Արքայի 1733 թ. Վենետիկում տպագրած (էջ 1268—1269) Աստվածաշնչերում: Տե՛ս նաև «Արարատ», Վաղարշապատ, 1969, № 2, էջ 39—41: Ֆրանսերեն թարգմանությունը տե՛ս Ed. Dulaurier, Recueil des historiens des croisades. Doc. arméniens, Paris p. 550-F51. Լատիներեն թարգմանությունը հայագետ Լակոզի կողմից արված ձեռագիր վիճակում պահվում է Վիեննայում: (Տե՛ս 2. 2. Տաշյան, Յուզակ հայերէն ձեռագրաց Կայսերական Մատենադարանին ի Վիեննա, 1891, էջ 34):

Սույն բանաստեղծության բովանդակությունը շատ նման է դարձյալ Հեթում Բ-ի պատվերով գրված վե-



րոհիչյալ նշանավոր Ճաշոցի վերջում եղող պատմական հիշատակարանի հետ (Տե՛ս հրտ. «Արարատ», 1871, էջ 355, և Ա. Տեր-Միքելյանի հրտ. «Սամուել քահանայի Անեցոյ...», Վաղարշապատ, 1893, էջ 212—223)։

Այս ձեռագրում կան նաև մանր հիշատակագրություններ (241ա և 384ա էջերում), որոնք սակայն նոր ոչինչ չեն ավելացնում։ Կան նաև գրչի կողմից գրված ծանոթագրություններ (81ա, 108բ, և 121բ), որով նա խնդրում է հետագայի ընդօրինակողներից տվյալ տեղերում նախ նախագրությունը և ապա գլխացանկը արտագրել։

Հեթում Բ-ի բանաստեղծության ներքևի մասում կտրված և հանված է 562-րդ էջից 5,7×6 սմ. մեծությամբ մի կտոր, որը ենթադրվում է, որ ձեռագրի քառանկիւնաձև թափափակ կնքոյ, զոր աւաղ անհարազատ իմն օտար ձեռք հատեալ բարձեալ է ի բաց («Արարատ», 1869, էջ 42)։

Ձեռագրի հետագա շրջանի պատմության համար խիստ ուշագրավ է նույն գրչագրի հետագայի ստացողի հիշատակարանը, որից հայտնի է դառնում, որ 1624 թ. արքայական Աստվածաշնչի տերն է դառնում Արիստակես վարդապետ Խարբերդցի անունով մի հոգևորական։ Վերջինս սույն թանկարժեք ձեռագիրը գանեկու մասին տալիս է շատ կարևոր տեղեկություններ, նա գրում է. «Յանկացաւդ եղէ Աստուածաշունչ Սուրբ Գրոցս, և ելի ի խնդիր սմին մեծաւ փափագանաւք, մինչ զի հինգ և վեց ամ ի պանդխտութիւն շրջեցա վասն սորա միթէ լիցի զի հասից փափագանաց իմոց...»։ «Վասնզի յորժամ գնացաք ի Տիգրանակերտ, կամաւքն Աստուծոյ պատահեաց մեզ Աստուածաշունչ Սուրբ Գիրքս մեծագին և բազմածախ։ Ստացա զսա ի վայելումն անձին իմոյ և առաջնորդ հոգւոյս իմոյ...»։ Հիշատակարանի վերջում Արիստակես վ. Խարբերդցին հիշում է իր աշակերտ Տեր Թադեոսին, որ շատ է աշխատել սույն Աստվածաշունչը ստանալու համար։ Ձեռագրի մի այլ հիշատակարանից երևում է նաև, որ Մելքիսեթ դպիրը, որը հիշում է իր ուսուցիչ և դաստիարակ Մելքիսեթ վարդապետին (երկուսով էլ Սեբաստացի), գնալով Կ. Պոլիս, Ղալաթիայում նույն 1624 թ. «Ի դուռն Ս. Խաչին և Ս. Լուսաւորչին» կազմում են Արիստակես վ. Խարբերդցու ստացած սույն թանկագին ձեռագիրը²⁵։

Մեր տեղեկությունները արքայական սույն Աստվածաշնչի մասին այսքանով էլ վերջ կարող էին գտնել,— քանի որ ձեռագրում հետագայի այլ հիշատակարաններ չեն պահ-

պանվել,— եթե մեզ չլուսարաններ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի այն վկայությունը. ըստ որի այս մեծարժեք գրչագիրը Կարինում ստացվել է Հովհաննավանքի վանահայր Զաքարիա եպիսկոպոսից։ Վաղարշապատցու կողմից և ինչպես այս, այնպես էլ Շոշում իր պատվեր տված մի այլ ձեռագիր Աստվածաշնչի և իր բոլոր շարժական և անշարժ գույքի հետ կտակել է Հովհաննավանքին²⁶։ Զաքարիան իր Շոշում պատվիրած Աստվածաշնչի վերջում թողած արժեքավոր հիշատակարանում այս մասին հաղորդում է հետևյալ ուշագրավ տեղեկություններով. «Յորժամ զայս ի Շօշ քաղաք գրեին (իմա նկատի ունի իր պատվիրած սույն Աստվածաշունչը—Ս. Փ.) ես նուստս ի թուին Ռձ՝ և Ե (1656 թ.) գնացի յԵրուսաղէմ ուխտ լուսաբուխ սուրբ գերեզմանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ և այլոց տնօրինականաց և ի գնալս իմ ի Կարին քաղաք, որ է յԱրդրում, շնորհօք շնորհողին ամենասուրբ Երրորդութեան հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ շնորհեաց ևս զայսպիսի շնորհս, զի Աստուածաշունչ մեծի աբխային Հեթում (ընդգծումը մերն է—Ս. Փ.) բերեալ էին ի ծախս, յորժամ տեսի գալարեցին աղիք իմ ի փորի իմում և նուաղեաց սիրտ իմ սակս սիրոյ Սուրբ գրոյս և յիշատակի մեծի արքային և սրբոյ, որ իւրովի հոմերական տաղիւ չափաբանութեամբ շարամանեալ ունէր դանուանս նախնեաց մինչև ցյինքն գեղեցիկ յօրինուածովք, և զայն ևս ղնեցաք պաշար և առիթ հոգւոց մերոց և կենաց բերկրութիւն մանկանց Սինի»²⁷։

Թեև այս փաստը իր ժամանակին ծանոթ է եղել Զոհրապյանին, այնուամենայնիվ նա կասկած է հայտնել այդ մասին և գրել է հետևյալը. «Այլ չիք ստուգութիւն հաստատելոյ, թէ սա այն իցէ»²⁸։

Զաքարիա վաղարշապատցին իր հիշատակարանում սույն երկու Աստվածաշնչերի նվիրաբերության մասին գրել է. «Մանաւանդ զայս երկու լուսին և արեգակս հոգւոց մերոց այս Սուրբ Աստուածաշունչս նուիրեցի սուրբ տաճարացս...»²⁹, Մակայն այստեղ Հովհաննավանքը հիշվում է իրրև Արագա-

²⁶ Месроп Тер-Мовсесян, նշված աշխատությունը, էջ 141—142։

²⁷ Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 201, էջ 613ա։

²⁸ Տե՛ս Զոհրապյանի հրտ. Աստվածաշունչը, առաջարան, էջ 7։ Զաքարիայի հիշատակարանից մի հատված, տե՛ս Գ. Զարհանալյան, Պատմ. Հայ դպրութեան, Բ. Նոր մատենագր., Վենետիկ, 1878, էջ 171։

²⁹ Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 201, էջ 613ա։

²⁵ Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 180, էջ 563։

ծոտնի Ս. Կարապետի վանք ձևով³⁰։ Որ Զաքարիան Հովհաննավանքի վանահայրն էր, այդ անվիճելիորեն երևում է նաև Զաքարիա սարկավագ Քանաքեռցու գրած կենսագրությունից³¹ և Առաքել Դավրիժեցու պատմությունից³²։ Հովհաննավանքը Ս. Կարապետի ձևով հիշվում է նաև վիմական արձանագրություններում³³։ Իսկ Ղուկաս Գառնեցու 1631 թ. հիշատակարանում ուղղակի ասված է. «Ի հրեշտակաբնակ մենաստանս Սուրբ Կարապետի, ընդ հովանեակ բարձրաբերձ երկնահանգէտ Սուրբ Աստուածածնի տաճարիս, որ մակադրեալ յորջորջի Յոհաննավանք»³⁴։ Զաքարիան, բացի վանքի վերանորոգումից, կարգավորեց նաև գրադարանը։ Նա հիշյալ երկու Աստվածաշնչերի հետ նվիրաբերեց նաև այլ ձեռագրեր։ Քիչ դիրք, թէ աւետարան, շարականոց, Այսմաւուրք, մեկնիչ, քարոզգիրք, Տոնացոյց, Աղօթամատոյց մինչև ցմէկ թուղթ մի»³⁵։ Զաքարիան իր կյանքի վերջին շրջանը անցկացրեց էջմիածնում, ուր և մահացավ 1659 թ. հունիսի 30-ին և թաղվեց զանգակատան առաջ նախապես իր փորել տված դամբարանում³⁶, որը սակայն այժմ չի երևում։ Հովհաննավանքից էլ այդ երկու ձեռագրերը Մեսրոպ եպիսկոպոսի կողմից փոխանցված դամբարանում³⁶, որը սակայն այժմ չի երևում։ Հովհաննավանքից էլ այդ երկու ձեռագրերը Մեսրոպ եպիսկոպոսի կողմից փոխանցված դամբարանում³⁶, որը սակայն այժմ չի երևում։ Հովհաննավանքից էլ այդ երկու ձեռագրերը Մեսրոպ եպիսկոպոսի կողմից փոխանցված դամբարանում³⁶, որը սակայն այժմ չի երևում։

Ոսկան Երևանցու տպագրած Աստվածաշնչում իր թողած հիշատակարանների ուշադիր զննումից պարզվում է, որ նա, բացի

Հեթում Բ-ի Աստվածաշնչից, իր ձեռքի տակ ունեցել է նաև Ղաղար Վալաբացու (Իմա Բաբերդացի) Աստվածաշնչինը, որը և Շոշում գրված վերոհիշյալ Աստվածաշնչին էր և որը իսկապես պատկանում է Ղաղարի խմբագրության, և երկուսով էլ, ինչպես նշեցինք, նվիրաբերվել էին Զաքարիա Վաղարշապատցու կողմից Հովհաննավանքին։

Ոսկան Երևանցին Աստվածաշնչինը տպագրելու ընթացքում արքայական գրչագիրը իրեն իբրև հիմք է ընդունել, իսկ Շոշում Ղաղար Վալաբացու կամ Բաբերդացու խմբագրությամբ բնագործակվածը՝ հիշատակել է իբրև լատինական ձևով առաջին տնատված և այլ լրացումներ ունեցող Աստվածաշնչինը։ Վերջինիս Ոսկանը հետևել է նաև այլ հարցերում, և որոնց անդրադառնալու ենք քիչ հետո։ Ուշագրավն այն է, որ Ոսկանը թեև ոչինչ չի գրել, թե Հին Կտակարանի մասում իրեն նախագաղափար է ունեցել արքայական Աստվածաշնչինը, սակայն ձեռագրի այդ մասում երևացող հաղարավոր նշումները, որոնք և նկատի են առնված նրա տպագրության մեջ, աներկրայելիորեն վկայում են մեր ասածը։ Նա բոլորովին այլ կերպ է վերաբերվել նոր Կտակարանին։ Այս վերջինի մասին, ինչպես նշեցինք, Ոսկանը խոստովանել է, թե իր ձեռքին է ունեցել Հեթումի Աստվածաշնչի վրայից իր իսկ կողմից կատարված մի արտագրություն։ Այդ հատկապես ապացուցվում է նրանով, որ Հեթումի Աստվածաշնչի նոր կտակարանային մասում ոչ մի հետադայի ուղղում չի երևում, քանի որ հիշյալ մասի բոլոր սրբագրությունները Ոսկանը կատարել է իր արտագրած ձեռագրի վրա։ Նա անշուշտ հրաժարվել է իր սրբագրությունները շարունակելու նաև Հեթումի գրչագրի նոր Կտակարանի մասում, ամենայն հավանականությամբ այդ մեծարժեք ձեռագրի նաև այդ մասը անհրաժեշտ եղող ուղղումներով չկեղտոտելու համար։ Մեր ասածը հաստատելու համար նշենք նաև, որ Ոսկանի Հին Կտակարանի մասում կատարած նշումների մի մասը (հատկապես տնահամարները) հետագայում մաքրելու նպատակով մի ձեռք ջնջել է մերթ քերիչով և մերթ էլ ջնջող դեղի միջոցով։

Սակայն ե՞րբ և ո՞րտեղ կարող էր Ոսկան Երևանցին տեսած լինել վերոհիշյալ երկու Աստվածաշնչերը։ Մենք կարծում ենք, որ հիշյալ Աստվածաշնչերը Ոսկանը կարող էր տեսնել և նրանցից արքայականի վրա կատարել տպագրության համար իր կողմից անհրաժեշտ համարված սրբագրությունները միայն 1659 թ. վերջում և կամ 1660 թ. սկզբում, այսինքն ձեռագրերի տեղ Զաքարիայի

³⁰ Զաքարիան իր մասին գրել է. «Առաջնորդ Ամատունեաց Սրբոյ Կարապետի» որ ի ստորոտս Արագածու և ի գաւառիս Կարոյ և յԱնրեբզոյ» (ձեռ. № 201, էջ 612ա)։

³¹ Զաքարիա սարկավագի Պատմագրութիւն, հատոր Գ, Վաղարշապատ, 1870, էջ 33—36։

³² Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, երրորդ տպ., Վաղարշապատ, 1896, էջ 348։

³³ Կարո Ղաֆալարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 80—81։

³⁴ Հ. Ներսէս վ. Ալիւնյան, Մովսէս Գ. Տաթևացի Հայոց կաթողիկոսն և իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 206։

³⁵ Մաշտոցյան Մատենադարանի Աճ. № 201, էջ 613ա։

³⁶ Զաքարիա սարկավագ..., էջ 36։



րիա վաղարշապատացու մահից և Շոշում գրված ձեռագրի ավարտումից հետո: Նշենք նաև, որ վերջինս ավարտվեց 1660 թ., երբ արդեն նրա պատվիրատուն մահացել էր, իսկ «Վերակացու էր այսմ սուրբ մատենիս» Պարսկահայ թեմի առաջնորդ Դավիթ վարդապետը³⁷, թեև արքայական Աստվածաշունչը 1656 թ. գտնվում էր Հայաստանում, սակայն Ոսկանը նրա տիրոջ՝ Զաքարիայի կենդանության օրոք հազիվ թե հնարավորություն ունենար իր ցանկացած սրբագրությունները նրա վրա անելու:

Ինչպես հայտնի է, Ոսկան Երևանցու վերականգնած Ուշիի Ս. Սարգիս վանքը գտնվում էր Հովհաննավանքին շատ մոտիկ: Ահա Ոսկանը օգտվելով այդ հարևանությունից կարողացավ շատ մոտիկից զբաղվել հիշյալ երկու գրչագրերով: Ինչպես գրում է պատմաբան Լեոն, Ոսկանը Ս. Սարգիս վանքի վանահայրն էր, երբ այդ պաշտոնում էլ եպիսկոպոս ձեռնադրվեց և դարձյալ այդ ժամանակ էր, որ իր եղբայրը՝ Ավետիքը, տպարանը իր ձեռքը վերցրեց, իսկ 1662 թ. էլ ինք մեկնեց Արտասահման³⁸, Այսպիսով, Ոսկանը ժամանակ պետք է ունեցած լիներ զբաղվելու սույն ձեռագրերով միայն 1660—1662 թթ.: Իբրև եզրակացություն նշենք նաև, որ Ոսկանը Աստվածաշունչի տարագրություն համար իր հետ պետք է տարած լիներ ոչ թե մեկ ձեռագիր, ինչպես կարծել են ցարդ բանասերները, այլ մեր կարծիքով՝ երկու գրչագիր. մեկը՝ արքայական Աստվածաշունչն էր իր սրբագրություններով հանդերձ՝ Հին Կտակարանի մասի համար, իսկ մյուսը՝ իր կողմից կատարված մի ընդօրինակություն էր նույն գրչագրի երկրորդ մասի վրայից՝ Նոր Կտակարանի մասի տպագրություն համար: Սակայն պետք է նշել, որ ինչպես Աստվածաշունչի Նոր Կտակարանի մասում, այնպես էլ 1668 թ. առանձին տպագրած Նոր Կտակարանի համար օգտագործվել է նույն բնագիրը, այսպիսով, վերջինս լոկ արտատպումն էր նախորդի, սակայն այլ շարվածքով:

Ինչպես նշեցինք, սկսած Զամչյանից մինչև այսօր պատմագիտության մեջ տիրել է նաև այն կարծիքը, ըստ որի Ոսկանը իր հետ տարած Աստվածաշունչի օրինակը նախապես սրբագրել է էջմիածնում գործող լատին հոգևորական Պիրոմալիի հետ: Սակայն եթե նկատի առնենք այն, որ ըստ Զամչյանի Պի-

րոմալին 1642 թ. երկրորդ անգամ Հայաստան գալուց հետո է, որ սկսեց Ոսկանի հետ խմբագրել Աստվածաշունչը, ուստի քանի որ դեռևս այդ ժամանակ Հայաստան չէր բերված Հեթումի Աստվածաշունչը, տվյալ շրջանի աշխատանքները մի նախափորձ պետք է նկատել, վերջնական սրբագրությունները արքայական Աստվածաշունչի վրա կատարելուց առաջ: Միաժամանակ պետք է կարծել, որ Ոսկանը, երբ 1660—1662 թթ. արքայական Աստվածաշունչի վրա համեմատություններ և նշումներ էր կատարում ըստ լատինական Վուլգատայի, շատ հնարավոր է, որ Պիրոմալին լատինաբան խորհուրդներով դարձյալ «սատարած» լիներ Ոսկանին, մանավանդ, որ այդ ժամանակաշրջանում էլ լատին քարոզիչը դեռևս հեռացած չէր Հայաստանից, այլ ինչպես երևում է Հ. Ղ. Ալիշանի հրատարակած Նախդեանի հայ կաթոլիկների եպիսկոպոսների ցուցակից, նա 1654—1664 թթ. վարում էր հիշյալ զավառի հայ միաբանողների եպիսկոպոսի պաշտոնը³⁹, և որտեղից շատ հեշտ էր էջմիածնի և նույնիսկ Ուշիի Ս. Սարգիս վանքը գնալը և խորհրդակցելը Ոսկանի հետ: Ուստի ելնելով վերոհիշյալ փաստերից հնարավոր է ենթադրել, որ Ոսկանի կողմից իր տպագրելի Աստվածաշունչի համար կատարած վերջնական սրբագրությունների մեջ Պիրոմալին ևս պետք էր որ ունեցած լիներ իր մասնակցությունը:

Փակելու համար արքայական Աստվածաշունչի նկարագրությանը նվիրված սույն գլուխը, անհրաժեշտ է նաև նշել գրչագրի բնագրային արժանիքների մասին: Զոհրապյանը բացասաբար խոսելով ոսկանյան սրբագրությունների մասին, անդրադարձել է նաև նրա օգտագործած ձեռագրին, գրելով հետևյալը. «Այս մատեան թէպէտ ըստ հանգամանաց՝ տեղւոյ և ժամանակի, և թէ՛ յումմէ և յոյր պէտս գրեցաւ՝ անգիտելի է մեզ, ոչ ունելով զքունն իսկ ի ձեռին, սակայն համեմատելով մեր զնորին օրինակ յոսկանեան տպագրութեան անդ՝ ընդ վերոյիշատակեալ գրչագրաց մերոց, չերևի ընտրելագոյն ինչ գաղափար՝ ոչ ըստ հմուտ չորչութեանն և ոչ ըստ այլոց մասանց անվթարութեան, բազմօք նմանեալ որպէս ասացաք, երրորդ գրչագիր օրինակին մերոյ. ըստ որում և ի փորձ մատուցեալ՝ ունի ստուգել մտադիր քննողն ի ծանօթութիւնս տարբերութեանց օրինակաց, որով և զսմանէ

³⁷ Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 201, էջ 614ա:

³⁸ Լեոն, Հայոց պատմություն, երրորդ հատոր, Երևան, 1946, էջ 448:

³⁹ Հ. Ղ. Ալիշան. Սխական... Վեներիկ, 1893, էջ 388:

գուշակեմք գրեալ ի Կիլիկիա իբր ի վերջն չորեքտասաներորդ դարու»⁴⁰,

Թեև հմուտ հեղինակը ճիշտ էր կռահել Ոսկանի օգտագործած գրագրի ստեղծման վայրը, սակայն այնուամենայնիվ իր ձեռքի տակ չունենալով բուն գրագիրը, ինչպես նրա գրման ժամանակի և ի մասնավորի բնագրական արժեքի մասին չէր կարողացել կողմնորոշվել: Գրագրի ընտրելագույն շիտնելու մասին Զոհրապյանի կարծիքը ճիշտ էր, սակայն նա գրագիր ասելով՝ նկատի ունեւր ոսկանյան հրատարակութունը և կարծում էր, որ այս վերջինս ներկայացուցիչն է իր հիմքում ընկած ձեռագրին: Այժմ, երբ գիտենք, որ Ոսկանը նախքան իր Աստվածաշնչի տպագրության հանձնումը մանրամասնորեն փոփոխության էր ենթարկել իր գրագիրը, ուստի Զոհրապյանի ընտրելագույն շիտնելու մասին տված վճիռը վերաբերում է Ոսկանի հրատարակությանը և ոչ արքայական գրագրին, որը մեկն է մեր լավագույն Աստվածաշնչերից: Այստեղից էլ մեզ պարզ է դառնում, թե ինչու իր ժամանակին դարձյալ Զոհրապյանը անդրովելիորեն մերժում էր Ոսկանի հրատարակության հիմքում Հեթում Բ-ի Աստվածաշունչը լինելու կարծիքը, քանի որ նրա դատողությունները վերաբերում էին միայն Ոսկանի Աստվածաշնչին:

Մեսրոպ արքեպիսկ. Տեր-Մովսիսյանը Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը նվիրած իր արժեքավոր աշխատության մեջ Հեթումի պատվերով գրված գրագիրը համարում էր մեր ամենաարժեքավոր ձեռագիր Աստվածաշնչերից մեկը⁴¹,

նույնպես Կարապետ եպիսկ. Տեր-Մկրտչյանը, որ մեր դարասկզբին խրիմյան Հայրիկի նախաձեռնությամբ ղեկավարում էր հայերեն Աստվածաշնչի համահավաք բնագրի կազմման աշխատանքները Մայր Աթոռի Մատենադարանում, «բազմակողմանի համեմատություններից հետո» ընտրել էր սկզբում 19 ձեռագիր Աստվածաշնչեր, այս վերջիններից էլ ի վերջո կանգ էր առել 8 լավագույն գրագրերի վրա, որոնց մեջ երրորդ տեղում նշանակել էր Հեթումի Աստվածաշունչը՝ իբրև ընտիր գրություն ունեցող ձեռագիր⁴²:

⁴⁰ Տե՛ս Զոհրապյանի հրտ. Աստվածաշունչը, առաջարան, էջ 7:

⁴¹ Месроп Тер-Мовсесян, նշված աշխատությունը, էջ 143:

⁴² «Արարատ», 1902, էջ 1083:


Գ.—Արքայական Աստվածաշնչի և ոսկանյան հրատարակության բովանդակության համեմատությունը

Ոսկան վարդապետ Երևանցու տպագրած Աստվածաշնչի օրինակը Հեթում Բ-ի պատվերով գրված Աստվածաշունչը լինելը ապացուցող ոչ պակաս կարևոր փաստարկումներից մեկն էլ հիշյալ երկուսի բովանդակության համեմատությունն է:

Նախորդ գլխում, երբ ներկայացրինք արքայական Աստվածաշնչի նկարագրությունը, նրա բովանդակության հարցին այնտեղ չանդադարձանք, որպեսզի հնարավորություն ունենայինք այն առանձին համեմատության նյութ դարձնելու և հատկապես տեսնելու, թե Ոսկանը ո՞րքանով է հարավատությանմբ հետևել իրեն իբրև օրինակ ընտրած գրագրին: Ո՞ր գրքերն է նա անփոփոխ պահել և ո՞րն է համարեցրել իր առաջադրած նպատակներին: Մի խոսքով ուզում ենք ցույց տալ, թե դասավորման ինչպիսի ձև էր որդեգրել Ոսկանը արքայական գրագրի գրքերի կարգը վերադասարկելիս: Այսինքն իր հրատարակության մեջ Ոսկանը ինչ չափով է հետևել Յոթանասնից կանոնին և հատկապես իրեն օրինակին, ու որքանով է միաժամանակ նա հետևել լատինական Վուլգատային: Կանգ ենք առնելու նաև այն հարցի վրա, թե Ոսկանը, բացի արքայական գրագրից, ազդվել է արդյոք նաև իրենից առաջ խմբագրված հայերեն այլ Աստվածաշնչերից:

Հեթում Բ-ի Աստվածաշնչի բովանդակության ստորև կատարվելիք մանրամասն թվարկումը, յուրաքանչյուր նյութի ընդգրկող էջերի նշումով հանդերձ, կարծում ենք, որ բացի մեր վերոհիշյալ նպատակագրումներից, կունենա նաև ճանաչողական նշանակություն, քանի որ այս միջոցով հայ ձեռագրագիտության առաջ առաջին անգամ լինելով, կարճաճանաչ մեր անցյալի ժառանգության արժեքավոր հուշարձաններից մեկի լրիվ պատկերը:

Ստորև նշում ենք Հեթում Բ-ի Աստվածաշնչի բոլոր գրքերը իրենց նախադրություններով և գլխացանկերով և նույնիսկ այլ բնույթի ամենափոքր նյութերով հանդերձ: Պահպանել ենք ուղղագրությունը և երբեմն նաև կրճատումները: Այլ ձեռքով գրված վերնագրերի դեպքում նշել ենք, որ դրանք ուրիշի ձեռքով են արված: Անխորադիր գրքերը վերականգնում ենք ըստ Զոհրապյանի հրատարակության վերնագրերի և բերում ենք ուղղանկյուն փակագծերի մեջ: Այստեղ չենք նշել միայն գրագրի հիշատակ:



կագրութիւնները, որոնց ամենակարևորները մեջ ենք բերել մեր հողավածի նախորդ գլխում: Ցույց ենք տվել բոլոր էջերը էջահամարներով, իսկ այն դեպքում, երբ առանց ա. կամ բ. տառերի թվահամարներ ենք նշել, այդ նշանակում է, որ տվյալ նյութը գտնվում է հիշյալ թվահամարը կրող թերթի երկու էջերում:

Բավանդակություն

Մաշտոցյան Մատենադարանի № 180 ձեռագիր Աստվածաշնչի

Հին կտակարան

1 Մեռնդէ (էջեր 1ա—26ա), 2 Նախագրութիւն ելիցն (26ա), 3 Գլուխք ելիցն (26ա—28բ), 4 Ելք (29ա—47բ), 5 Նախագրութիւն Ղևտականին (47բ), 6 Գլուխք Ղևտականին (47բ—49ա), 7 Ղևտական (50բ—62ա), 8 Նախագրութիւն Թուոց (62), 9 Գլուխք Թուոց (62բ—63ա), 10 [Թիւք է] (63բ—80ա), 11 Գլուխք երկրորդ արինաց (80ա—81ա), 12 Նախագրութիւն երկրորդ արինաց (81ա), 13 երկրորդումն արինաց (82ա—96ա), 14 Նախագրութիւն գրոցն Ցեսուայ Որդու Նաւայ (96ա), 15 Գլուխք Ցեսուայ որդու Նաւայ (96), 16 Գիրք Ցեսուայ որդու Նաւայ (97ա—107բ), 17 Գլուխք գրոց դատաւորաց (107բ—109ա), 18 Նախագրութիւն գրոց դատաւորաց (108), 19 Նախագրութիւն Հոռիայ (108բ), 20 Դատաւոր (109ա—119ա), 21 Հ[ն]ութ (119ա—120ա), 22 Ցառաջարան նախակարգեալ Թագաւորութեանց (120), 23 Գլուխք առաջին Թագաւորութեանց (120բ—121ա), 24 Նախագրութիւն Թագաւորութեանց Չորք գլխոցն (121), 25 Առաջներորդ գիրք Սամուիդի, հնով առաջներորդ Թագաւորութեանց. Մեր. գրված է այլ գրով (Ոսկանիէն է) (122ա—136ա), 26 Գլուխք երկրորդ Թագաւորութեանց (136ա—137ա), 27 Թագաւորութեանց երկրորդ (137ա—149ա), 28 Գլուխք երրորդ Թագաւորութեանց (149ա—150ա), 29 Թագաւորութեանց երրորդ (150ա—163բ), 30 Գլուխք Չորրորդ Թագաւորութեանց (163բ—164բ), 31 Թագաւորութեանց Չորրորդ (164բ—177ա), 32 Նախագրութիւն առաջին և երկրորդ Մնացորդաց (177ա), 33 Գլուխք առաջին Մնացորդաց (177բ), 34 [Առաջին Մնացորդաց] (177բ—189ա), 35 Գլուխք երկրորդ Մնացորդաց (189ա), 36 [Երկրորդ Մնացորդաց] (189բ—206բ), 37 Նախագրութիւն գրոց եզրի (206բ), 38 Գլուխք առաջին գրոց եզրի (206բ), 39 Գիրք եզրի առաջին (207ա—216ա), 40 Հանգամանք գլխոց երկրորդ եզրայ (216ա), 41 եզրայ երկրորդ (216ա—221ա), 42 Նախագրութիւն գրոցն Նէմեայ (221ա), 43 Գլուխք գրոցն Նէմեայ (221ա), 44 Բանք Նէմեայ որդու Աքաղիայ (221ա—227բ), 45 Նախագրութիւն գրոցն Եսթերայ (228ա), 46 Եսթեր (228ա—233բ), 47 Նախագրութիւն գրոցն Յուդթայ (233բ), 48 Յուդթայ գիրքն՝ այս (233բ—241ա), 49 Նախագրութիւն Տովթիթայ (241ա), 50 Տովթիթ (241ա—246ա), 51 Նախագրութիւն առա-

ջին Մակարայեցոց (246ա), 52 Գլուխք առաջին գրոց Մակարայեցոցն (246ա—247ա), 53 Գիրք առաջին Մակարայեցոց (247ա—264բ), 54 Նախագրութիւն Կրկնորդ Մակարայեցոց (264բ), 55 Գլուխք երկրորդ Մակարայեցոց (265ա), 56 Գիրք երկրորդ Մակարայեցոցն (265բ—278բ), 57 Նախագրութիւն երրորդ Մակարայ[եցոց] (279ա), 58 Գլուխք երրորդ Մակարայեց[ոց] (279ա), 59 Գիրք երրորդ Մակարայեցոց (280ա—286ա), 60 Երանելուն Եպիփանու Եպիսկոպոսի Կիպրացոց, Յաղաքս Երզոց Սաղմոսարանին (286բ—287բ), 61 Գիրք Սաղմոսաց (288ա—318ա), 61ա Այս Սաղմոս ինքնագիր Դաւիթ արտաքոյ Թուոյ... (318բ), 62 Նախագրութիւն առական (318բ), 63 Գլուխք առաջնոյ բանից առական (318բ—319ա), 64 Առակք Սաղմոսի որդու Դաւիթ արքայի Իդիմեր. Դրված է կիսախոսքի մեջ այլ գրով (Ոսկանիէն է) (320ա—332ա), 65 Նախագրութիւն Ժողովողին (332ա), 66 Գլուխք Ժողովողին (332ա—333ա), 67 Բանք Ժողովողի որդու Դաւիթ արքայի որ յերուսաղէմ, Մեր. գրված է այլ գրով (Ոսկանիէն է) (334ա—337ա), 68 Նախագրութիւն երզոյ Երզոցն (337), 69 Երզ Երզոց որ է արհեստիւն արհեստեանց ասացեալ Սողմոմի արքայի Իլի (338ա—339բ), 70 Նախագրութիւն Իմաստութեան Սողմոմի (339բ), 71 Գլուխք Իմաստութեան Սողմոմի (339բ—340ա), 72 Յիշատակարան, Սկիզբ՝ Աստուածնդէն հոգովն ի սմա, յաղաղութիւն անուն արքայ... Վերջ... Փոյր կոչելով աստուածակառք, Յաննիթական տարեալ քաղաք (Մեր. բանաստեղծութեան առաջին տողերի սկզբնատառերը հաղում են Ա—Ք Հայկական այբբենի բոլոր տառերը): Ներսէսի կաթողիկոսի սրբոյ է բանս, և նորին համանուն և զաստիարակեալ աշակերտի գրեալ (347ա):

Տե՛ս Կրտ. «Տեառն Ներսէսի Շնորհալույ Հայոց կաթողիկոսի բաճի չափաւ» Բ. տպագրութիւն ի Վեներտիկ 1928, էջ 385—388:

73 Նախագրութիւն Յովբայ (347բ), 74 Յովիանայ Եպիսկոպոսի Աղիկառնացույ (347բ—348ա), 75 Գիրք Յորայ, Մեր. կառմիւր բաճափ վրա սևով ուղղված է Յօբայ, Ոսկանի ձեռքն է (349ա—358բ), 76 Նախագրութիւն Եսայեայ մարգ. (359ա), 77 Գլուխք Եսայեայ մարգարէութեան (359), 78 Գլուխք առաջներորդ, Տեպիլ Եսայեայ որդու Ամովսայ զոր ետես ի վերայ Հրէաստանի և ի վերայ Երուսաղէմի... (360ա—381ա), 79 Գիրք տեսլեանց Երկոտասան սուրբ մարգարէիցն, Գլուխք Ովսէի մարգարէի (381ա), 80 Նախագրութիւն Երկոտասան մարգար. (381), 81 Մարգարէութիւն Ովսեայ (381բ—384ա), 82 Գլուխք Ամովսայ մարգ. (384ա), 83 Մարգարէութիւն Ամովսայ (384ա—386բ), 84 Գլուխք Միքիայ մարգարէի (386բ), 85 Մարգարէութիւն Միքիայ (386բ—388ա), 86 Գլուխք Յովնայ մարգարէի (388ա), 87 Մարգարէութիւն Յովնայ (388ա—389ա), 88 Գլուխք Արդիու մարգարէի (389ա), 89 [Մարգարէութիւն Արգիւ] (389բ), 90 Գլուխք Յովնանու մարգարէի (389բ), 91 Մարգարէութիւն Յովնանու (389բ—390ա), 92 Գլուխք Նաու-

մայ մարգարէի (390): 93 Մարգարէութիւն Նաւումայ (390—391ա): 94 Գլուխք Ամբակումայ մարգարէի (391ա): 95 Մարգարէութիւն Ամբակումայ (391ա—392ա): 96 Գլուխք Սոփոնիայ մարգարէի (392ա): 97 Մարգարէութիւն Սոփոնիայ (392): 98 Յառաջաբան Անկէի մարգարէի (392բ): 99 Անկեայ, Մեր. Կառմիր Եանաֆի վրա Ոսկանք սևով նիշտ կերպով ուղղել է կ—ն գ—ի և հրտ. է Անգեայ. (393): 100 Գլուխք Զաքարիայ մարգարէի (393բ): 101 Մարգարէութիւն Զաքարիայ (393բ—397ա): 102 Գլուխք Մաղաքիայ մարգարէի (397ա): 103 Մարգարէութիւն Մաղաքիայ (397ա—398ա): 104 (Պատմական Հիշատակարան տաղաւափեայ). Սկիզբ՝ Զոր մարգարէքս սպառնացան, իբրուսողէմի յորժամ մեղան... Վերջ՝ Զի զմարգարէիցս զարձին զրան, յՎայելիւր գտցուք արժանի (398ա):


Մեր. Խաչակիրների արշավանքին է վերաբերում և զրված է ապաւնովաբար 1193 թ.: Տե՛ս հրտ. Գառնգիւն Ա կարողիկոս, «Յիշատակարանք ձեռագրեայ», հատոր Ա, Անթիիաս, 1951, էջ 571—572:

105 Նախագրութիւն Դանիէլի մարգարէի (398ա): 106 Գլուխք Դանիէլի մարգարէի (398): 107 Մարգարէութիւն Դանիէլի (399ա—406բ): 108 Նախագրութիւն Երեմիայ մարգ. (406բ): 109 Գլուխք Երեմիայ մարգարէի (406բ—407բ): 110 Գիրք Երեմիայ մարգարէի (408ա—429բ): 111 Բարութ. (429բ—431ա): 112 Բարութ. Սրբոյ Երեմիայի ողբք (431ա—433ա): 113 Աղաւթք սրբոյն Երեմիայ (433ա): 114 Գլուխք գրոց Եղեկիէի մարգա. (433): 115 Նախագրութիւն Եղեկիէի (433բ—434ա): 116 [Մարգարէութիւն Եղեկիէի] (434ա—451ա):

Նոր կտակարան

117 Գլուխք Մատթէոսի Աւետարանին (452բ—453ա): 118 Լամաձայնութիւն Նախասացեալ զլիւթս (453ա): 119 Նախագրութիւն ըստ Մատթէոսի Աւետարանին (453ա): 120 [Աւետարան ըստ Մատթէոսի] (454ա—464բ): 121 Գլուխք Մարկոսի Աւետարանի [ի] (464բ—465ա): 122 Նախագրութիւն Մարկոսի Աւետարանի (465ա): 123 Աւետարան ըստ Մարկոսի (466ա—473ա): 124 Գլուխք Լուկայ Աւետարանին (473): 125 Նախագրութիւն Լուկայ Աւետարանին (473բ): 126 [Աւետարան ըստ Լուկասոյ] (474ա—485բ): 127 Գլուխք ըստ Յովհաննու Աւետարանին (485բ—486ա): 128 Նախագրութիւն Յովհաննու Աւետարանին (486ա): 129 [Աւետարան ըստ Յովհաննու] (487ա—495բ): 130 Յառաջաբան գրոցս Գործոց Առաքելոց (496): 131 Յառաջագիր զլիւթս Գործոց Առաքելոց (496բ—497ա): 132 Ի գիրս Գործոց Առաքելոց Ընթերցուածք (497ա): 133 Այլ նախագրութիւն Գործոցս կարճ. այլոյ ունեմն (497): 134 Վիճակեալ սարկաւազան որ եղեն յառաքելոցն, Անուանք են այսոքիկ (497բ): 135 Ընթացքն Պաւլոսի առաքելոյ (497բ): 136 Գործք Առաքելոց (498ա—509բ): 137 Յառաջաբան Եւթանցունց թղթոցն կաթողիկեայց (509բ): 138 Դիր զլիւթս իւրաքանչիւր թղթոցն Կաթողիկեայց Գլուխք թղթոյն Յակովբայ (509բ—510ա): 139 Նախագրութիւն Կաթողիկեայ թղթոյն Յակովբայ (510ա):

140 Թուղթ սրբոյ առաքելոյն Յակովբոս կաթողիկէ (510բ—511բ): 141 Գլուխք առաջին թղթոյն Պետրոսի (512ա): 142 Նախագրութիւն առաջին թղթ. Պետրոսի (512ա): 143 Թուղթ Պետրոսի առաջին (512ա—513բ): 144 Գլուխք Երկրորդ թղթ. Պետրոսի (513բ): 145 Նախագրութիւն Երկրորդ թղթոյն Պետրոսի (513բ): 146 Թուղթ Պետրոսի Երկրորդ (514): 147 Գլուխք առաջին թղթոյն Յովհաննու (515ա): 148 Նախագրութիւն առաջին թղթ. Յովհաննու (515ա): 149 Թուղթ Յովհաննու առաջին (515ա—516բ): 150 Գլուխք Երկրորդ թղթ. Յովհաննու (516բ): 151 Նախագրութիւն Երկրորդ թղթ. Յովհաննու (516բ): 152 Թուղթ Յովհաննու Երկրորդ (517ա): 153 Գլուխք Երկրորդ թղթոյն Յովհաննու (517ա): 154 Նախագրութիւն Յովհաննու Երկրորդ թղթ. (517ա): 155 Թուղթ Յովհաննու երրորդ (517): 156 Գլուխք թղթոյն Յովհաննու (517բ): 157 Նախագրութիւն թղթոյն Յովհաննու առաքել. (517բ): 158 Թուղթ Յովհաննու կաթողիկէ (517բ): 159 Աղևս և Եւթաղի (518ա): 160 Յառաջաբան Պաւլոսի առաքելոյ նախակարգեալ ի զլուխ գրոցս (518բ—520ա): 161 Վկայութիւն Պաւլոսի առաքելոյ (520ա): 162 Բովանդակութիւն ընթերցուածոց և որոց ի նոսա զլուխք և վկայութիւնք և ըստ իւրաքանչիւր թղթոցն առաքելոյ և որչափ իւրաքանչիւր ի նոցանէ տունք իցեն (520): 163 Յառաջագիր (520բ): 164 Բովանդակութիւնք աստուածեղէն վկայութեանց... (520բ—523ա): 165 Յառաջագիր (521ա): 166 Գլուխք Հոռովմայնցւոց թղթոյն Պաւլոսի (523ա): 167 Նախագրութիւն առ Հոռովմայնցիս թղթ. Պաւլ. (523): 168 [Պաւլոսի առաքելոյ առ Հոռովմայնցիս թուղթ] (524ա—528բ): 169 Գլուխք առաջին թղթոյն Կորնթացւոց (528բ): 170 Նախագրութիւն առ Կորնթացիս ա թղթոյն (528բ—529ա): 171 Առ Կորնթացիս առաջին թուղթ (529ա—533բ): 172 Գլուխք Երկրորդ թղթոյն Կորնթացւոց (533բ): 173 Նախագրութիւն Կորնթացիս ր թղթոյն (533բ—534ա): 174 Առ Կորնթացիս թուղթ Երկրորդ (534ա—537ա): 175 Թուղթ Կորնթացւոցն առ սուրբ առաքելաւն Պաւլոս (537): 176 Թուղթ Երրորդ առ Կորնթացիս սուրբ առաքելոյն Պաւլոսի (537բ—538ա): 177 Գլուխք Գաղատացւոց թղթոյն (538ա): 178 Նախագրութիւն Գաղատացւոց թղթոյն (538ա): 179 Առ Գաղատացիս թուղթ (538ա—540ա): 180 Գլուխք Եփեսացւոց թղթոյն (540ա): 181 Նախագրութիւն առ Եփեսացիս թղթոյն (540ա): 182 Թուղթ առ Եփեսացիս (540ա—541բ): 183 Գլուխք Փիլիպեցւոց թղթոյն (541բ): 184 Նախագրութիւն առ Փիլիպեցիս թղթոյն (541բ—542ա): 185 Առ Փիլիպեցիս (542ա—543ա): 186 Գլուխք Կողոսացւոց թղթոյն (543ա): 187 Նախագրութիւն առ Կողոսացիս թղթոյն (543ա): 188 Առ Կողոսացիս (543բ—544բ): 189 Գլուխք առաջին թղթ. Թեսաղոնիկեցւոց (544բ): 190 Նախագրութիւն առ Թեսաղոնիկեցիս ա թուղթ (544բ—545բ): 191 Առ Թեսաղոնիկեցիս թուղթ առաջին (544բ): 192 Գլուխք Թեսաղոնիկեցւոց ր թղթոյն (545բ): 193 Նախագրութիւն առ Թեսաղոնիկ. ր թղթ. (545բ—546ա): 194 Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ թուղթ (546): 195 Գլուխք



թղթոյն Երրայեցոց (546թ—547ա), 196 Նախադրութիւն առ Երրայեցիս թղթոյն (547ա), 197 Թուղթ առ Երրայեցիս (547ա—550թ), 198 Գլուխք առ Տիմոթէոս առաջնոյ թղթ. (550թ), 199 Նախադրութիւն առ Տիմոթէոս ա թղթ. (550թ—551ա), 200 Առ Տիմոթէոս առաջին թուղթ (551ա—552ա), 201 Գլուխք ք թղթոյն որ առ Տիմոթէոս (552ա), 202 Նախադրութիւն առ Տիմոթէոս ք թղթոյն (552), 203 Առ Տիմոթէոս թուղթ երկրորդ (552թ—553ա), 204 Գլուխք թղթոյն որ առ Տիմոթէոս (553թ), 205 Նախադրութիւն առ Տիմոթէոս թղթոյն (553թ), 206 Առ Տիմոթէոս (553թ—554ա), 207 Գլուխք թղթոյն որ առ Փիլիմոն (554ա), 208 Նախադրութիւն առ Փիլիմոն թղթոյն (554ա), 209 Առ Փիլիմոն և Արքիպպաս սարկաազ և Ապփիայ թուղթ (554), 210 Սաիփիւրոն (554թ), 211 Նախադրութիւն Պաղոսի առաքելոյ ի Հռովմ (554թ), 212 Նախադրութիւն Յայտնութեան Յովհաննու (554թ—555ա), 213 Դրութիւն գլխոց սրբոյն Յայտնութեան (555ա), 214 Յայտնութիւն սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աստուածաբան աւետարանի (556ա—561թ):

Ոսկանյան Հրատարակութեան իբրև օրինակ ծառայած Հեթում Բ-ի Աստվածաշնչի բովանդակութեան մանրակրկիտ պատկերը ներկայացնելուց հետո, անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել վերջինիս բովանդակութեան արժանիքների վրա: Հիշյալ քննությունը մենք կատարում ենք արքայական գրչագրի բովանդակությունը Մաշտոցյան Մատենադարանի մի քանի հնագույն Աստվածաշնչերի, ինչպես նաև Զոհրապյանի և Բաղդատունու կողմից կատարված մեր քննական հրատարակությունների հետ համեմատության մեջ դնելու միջոցով: Արքայական Աստվածաշնչում բացակայում է Ներքի Գ դիրքը, որը կա Ղազար Բաբերդացու ձեռագիր Աստվածաշնչում⁴³ և հրատարակվել է Զոհրապյանի կողմից Աստվածաշնչի հավելվածում, իսկ Բաղդատունին այն հավելվածում էլ չի թողել: Գրչագրում չկա նաև Սիրաքի գիրքը, որը գտնում ենք Մատենադարանի 1317 թ. գրված մի Աստվածաշնչում⁴⁴, Ղազարի հիշյալ և այլ ձեռագիրներում: Այն ևս Զոհրապյանը հրատարակել է հավելվածում, իսկ Բաղդատունին ավելի կատարյալ բնագիր գտնելով բերել է Խմաստության գրքից հետո: Ձեռագրում չկան նաև Մանասէի աղոթքը և Հովհաննես ավետարանիչի հանգիստը և որոնք հանդիպում են մեր տարբեր գրչագրերում և Զոհրապյանի կողմից դարձյալ բերված են հավելվածում: Հին Կտակաբանի գրքերի հերթականությունը մինչև Մաղաքիայի մարգարեության վերջը ինչպես գրչագրում, այնպես էլ Զոհրապյանի քննական հրատարակության մեջ

հարևանում է, որից հետո սակայն ձեռագրում նախ Դանիելն է և ապա Երեմիան, այնինչ Զոհրապյանի մոտ հակառակն է: Սակայն վերջինս նշում է, որ իր ձեռքի տակ է ունեցել մի ձեռագիր, որը տարբեր է եղել⁴⁵ և մեր կարծիքով նման է եղել արքայական ձեռագրին: Նոր Կտակարանը թե՛ արքայական Աստվածաշնչում և թե՛ Զոհրապյանի մոտ համանման է, բացի Կորնթացվոց թղթից ուղղված Պողոսին և վերջինիս Գ թղթից առ Կորնթացիս, որոնք Զոհրապյանը հրատարակել է հավելվածում, սակայն նշում է նաև այն մասին, որ մի քանի այլ ձեռագրերում այդ թղթերը բերված են բնագրում⁴⁶, այսինքն նման են մեր գրչագրին: Զոհրապյանը Եվթաղի աղբյուր հավելվածում է դարձյալ գետնեղել, այնինչ գրչագրում այն գտնվում է բնագրում:

Այսպիսով վերոհիշյալ համեմատությունից ակնհեր է դառնում, որ Հեթում Բ-ի Աստվածաշնչում մեծ մասամբ համընկնում է մեր գրչագիր և տպագիր լավագույն Աստվածաշնչերի բովանդակությանը և նյութերի դասավորությանը: Գրչագրում պակասում են միայն այն գրքերը, որոնք Զոհրապյանը հրատարակել է հավելվածում իբրև պարականոն գործեր:

Այժմ անհրաժեշտ է պատասխանել նաև այն հարցին, թե Ոսկան վարդապետ Երեանցին ի՞նչ չափով հարազատ կարողացավ մնալ իրեն իբրև միակ օրինակ ընտրած գրչագրի բովանդակությանն ու գրքերի դասավորման հերթականությանը:

Ոսկանը, ինչպես նշել է իր Աստվածաշնչում, չի բերել գրքերի վերաբերյալ եղող նախադրություններն ու գլխացանկերը: Դարձյալ նա չի տպագրել իր օրինակում եղող Եվթաղի աղբյուրն ու Կորնթացիների թուղթը ուղղված Պողոս առաքյալին և վերջինիս երրորդ թուղթը ուղղված Կորնթացիներին: Սույն թղթերը, ինչպես նշեցինք, Զոհրապյանը հրատարակել է հավելվածում, այնինչ Ոսկանի հավելվածում մուտք են գործել Մանասիի աղոթքն ու իր թարգմանած Եզրասի Դ գիրքը: Ինչ վերաբերում է գրքերի հերթականությանը, Ոսկանը մինչև Եզրասի Բ գիրքը և վերջինիս հաջորդող Նեեմյայի գիրքը համընթաց է գնացել գրչագրին, որից հետո շեղվելով, փոխանակ նախ Եսթերի, Հուդիտի և Տովբիտի գրքերը հրատարակելու, նախ բերել է Տովբիտի, ապա

⁴³ Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 351 և 201:

⁴⁴ Նույն տեղում, № 353:

⁴⁵ Տե՛ս Զոհրապյանի հրտ. Աստվածաշնչը, էջ 554-ի ծնթ.-ը:

⁴⁶ Նույն տեղում, էջ 793-ի ծնթ.-ը:

Հուդիտի և վերջում Եսթերի գրքերը: Ապա Ոսկանը գարձյալ հետևել է գրչագրին և զետեղել է Մակարայեցվոց Ա, Բ, Գ գրքերը, որից հետո նորից է շեղվել. Եսթերի գրքի վերջում գրուած է Հոբի գիրքը: Շարունակության մեջ Սաղմոսից մինչև Իմաստության գիրքը, այսինքն հինգ գիրք, Ոսկանը ընթացել է գրչագրին համընթաց: Իմաստության գրքից հետո Ոսկանը մոտենել է իր իսկ թարգմանած Սիրաքի գիրքը, սակայն այս վերջինը նույն տեղում է գտնվում նաև 1317 թ. և 1619 թ. արտագրված և սրանցից առաջ մեր հիշած Աստվածաշնչերում, ինչպես նաև Վուլգատայում: Ապա դարձյալ ակնհայտ է դառնում Ոսկանի շեղումը գրչագրից: Նա իր օրինակի ունեցած Իմաստության գրքի և ապա Հոբի, Եսայիի, 12 մարգարեների, Դանիելի, Երեմիայի, Բարուքի, Երեմիայի ողբի, վերջինիս աղոթքի և Եզեկիելի գրքերի հերթականությանը չհետևելով իր հրատարակության մեջ փոփոխել է նրանց դասավորումը, Սիրաքից հետո տպագրելով Եսայիի, Երեմիայի, վերջինիս ողբի ու աղոթքի, Բարուքի, Եզեկիելի, Դանիելի և ի վերջո 12 մարգարեների գրքերը: Սակայն 12 մարգարեների գրքերի դասավորումը ևս Ոսկանի մոտ տարբերվում է արքայական գրչագրից: Ձեռագրի ունեցած Ովսեայի, Ամոսի, Միքիայի, Հովելի, Աբգիուհի, Հովնանի և Նավումի գրքերի հերթականության փոխարեն, Ոսկանը տպել է Ովսեայի, ապա Հովելի, Ամոսի, Աբգիուհի, Հովնանի, Միքիայի և ապա Նավումի գրքերը: Նոր Կտակարանում ևս Ոսկանը տեղ-տեղ շեղվել է իր օրինակից և փոխանակ Գործք Առաքելոցից հետո բերելու Կաթողիկյա թղթերը, նախ զետեղել է Պողոս առաքյալի թղթերը և ապա միայն բերել Կաթողիկյա թղթերը: Նա փոխել է նաև Պողոսի առ Եբրայեցիս թղթի տեղը և փոխանակ իր օրինակի և մեր մյուս գրչագրերի նման այն զետեղելու ԲԹեսաղոնիկեցիս և Ա Տիմոթեոս թղթերի միջև, զետեղել է Պողոսի թղթերի ամենավերջին տեղում:


Վերոհիշյալ համեմատություններից հետո հարց է առաջանում, կարո՞ղ ենք Ոսկանի կողմից իր օրինակից հաճախ տարբերվող շեղումները պատահականության արդյունք համարել, թե այդ բոլորը կարող էին պայմանավորված լինել տիրող իրադրության թելադրությամբ և ըստ այնմ ընթացած լինեն նախապես կազմված մի ծրագրի համաձայն:

Ոսկանի կողմից իր գրչագրի համեմատությամբ թույլ տված շեղումների իմաստը պարզելու գործում կարևոր նշանակություն

ունի ոսկանյան հրատարակության համեմատությունը Վուլգատայի հետ, որը և կուսարանի այն հարցը, թե ինչքանով է Ոսկանը հավատարիմ մնացել իր գրչագրին և ինչ չափով է նա հետևել լատինական Աստվածաշնչին:

Առաջին շեղումը, որ կատարել է Ոսկանը Վուլգատայից, դա Եզրի Ա և Բ գրքերի հրատարակումն է, որոնք բոլորն էլ համընկնում են իրենց բովանդակությամբ Հեթումի գրչագրին: Նրա հրատարակած Ա Եզրասը իրականում համընկնում է Վուլգատայի Բ Եզրասին, իսկ Ոսկանի տպագրած Բ Եզրասը Վուլգատայի կանոնում չկա և զետեղված է նրա հավելվածում իբրև Գ Եզրաս: Նեեմայի գրքից հետո Ոսկանը շեղվել է գրչագրից, որով, ինչպես նշեցինք, նա հակառակն է շրջել Եսթեր—Հուդիտ—Տովբիտ գրքերի դասավորումը: Նշենք սակայն, որ վերջինս ինքնահաճ գործ չէր, այլ դալիս էր Վուլգատայից: Ապա Եսթերի գրքից հետո փոխանակ լատինական կանոնի համաձայն հրատարակելու Հոբի գիրքը, Ոսկանը դարձյալ ընկել է իր օրինակի աղոթքության տակ և հրատարակել է Մակարայեցվոց Ա, Բ, Գ գրքերը, որոնցից միայն Ա և Բ գրքերը կան Վուլգատայում, այն էլ բերված են Հին Կտակարանի վերջում: Սակայն սրանից հետո բերելով Հոբի գիրքը մինչև վերջ, այսինքն մինչև Մաղաքիայի մարգարեությունը, Ոսկանը ձեռագրից կատարած իր բոլոր շեղումներով հանդերձ տարացիորեն համընթաց է գնացել Վուլգատային: Բացառությունը այստեղ այն է, որ փոխանակ վերջում Մակարայեցվոց երկու գրքերը զետեղելու, նա դրանք բերել է իր գրչագրի նման վերելում և տպագրել է երեք գիրք: Ինչ վերաբերում է Նոր Կտակարանին, այն իր բովանդակ դասավորությամբ և անգամ իր հավելվածով լրիվ համընկնում է Վուլգատային: Այստեղ Ոսկանի բոլոր շեղումները իր գրչագրի համեմատությամբ, դարձյալ համապատասխանում են լատինական կանոնին: Այսպիսով, իր օրինակից տարբերվող ոսկանյան շեղումները բոլորովին մեզ իրավունք չեն տալիս ենթադրելու, թե Ոսկանը այլ գրչագիր է ունեցել իր ձեռքում, Հեթումի Աստվածաշնչից բացի, և ոչ էլ նրա փոփոխումները ինչ-որ պատահականության արդյունք էին, այլ որ նշված շեղումների աղբյուրը եղել էր Վուլգատան:

Ոսկանյան կանոնի համեմատության առիթով անդրադառնանք նաև մի այլ հարցի: Ոսկանը իր Աստվածաշնչի սկզբում Հակոբ Դ Ջուդայեցի կաթողիկոսին ուղղած իր ձոնի վերջում «Կարգ դրոց հնոյ կտակարանի»



խորագրի տակ գետեղել է իր հրատարակելի Հին Կտակարանի կանոնը, առընթեր նշելով նաև գրքերի բովանդակած գլուխների թիվը: Այստեղ ուշագրավն այն է, որ շնայած Ոսկանը լրիվ բերել է այդ ցանկը լատինական կանոնի համաձայն, սակայն հետագայում տպագրության ընթացքում հետևելով իր գրչագրին, հաճախ շեղվել է սկզբի հիշյալ ցանկից: Ինչպես տեսանք, Ոսկանի հրատարակած Եզրի Ա և Բ գրքերը արտաքինապես իրենց թվահամարներով համընկնելով իսկ լատինականին, այնուամենայնիվ իրենց բովանդակությամբ նրանք նույն գրքերը չեն, այլ Ա գիրքը համապատասխանում էր Լատինականի Բ գրքին, իսկ Բ գիրքն էլ Լատինականի հավելվածում եղող Եզրի Գ գիրքն էր: Նույնպես Եսթերից հետո, ըստ իր նախատեսած լատինական ցանկի, Ոսկանը պետք է հրատարակեր Հոբի գիրքը, այնինչ դարձյալ հետևելով իր գրչագրին այնտեղ գետեղել է Մակաբայեցվոց երեք գրքերը և ապա միայն բերել Հոբը և մյուս գրքերը: Հավանական է ենթադրել, որ Ոսկանը նման միջոցի է դիմել լատին գրաքննիչների խստութուններից իր գործը ազատ կացուցանելու համար, քանի որ առաջին հայացքից երևացողը՝ Հին Կտակարանի ցանկն էր, որը սակայն ինքը բերել էր հար և նման Վուլգատային, բայց այն խախտել էր իր հրատարակության ընթացքում:

Մի այլ հարց, որը ևս օգնելու է Հենթումի Աստվածաշունչը ոսկանյան հրատարակության իբրև օրինակ դասվելուն, վերաբերում է Ոսկանի կողմից իր հրատարակած Աստվածաշունչում կատարած թարգմանություններին: Ինչպես մանրակրկիտորեն նշում է Ոսկանը Աստվածաշունչում և դարձյալ իր կողմից 1669 թ. հրատարակած Առաքել Դավրիժեցու պատմության հիշատակարաններում, ինքը հայերեն ձեռագրերում պակասավոր է գտել Սիրաբի գիրքը և Եզրի Դ գիրքը և ստիպվել է ամբողջությամբ թարգմանել Վուլգատայից: Լատիններից թարգմանելու պատճառը հետևանք էր այն բանի, որ Ոսկանի ընտրած օրինակում, ինչպես երևում է նաև մեր վերևում բերած մանրամասն նկարագրությունից, իսպառ բացակայում էին հիշյալ գրքերը: Ոսկանը թեև Սիրաբի գիրքը չունի իբրև օրինակ ընտրած իր ձեռագրում, սակայն այն կար իր տրամադրության տակ եղող Շոշում արտագրված Պաղար Բաբերդացու Աստվածաշունչի օրինակում: Ոսկանը, որ նախքան Աստվածաշունչի խմբագրման աշխատանքներին անցնելը, ամենայն հավանականությամբ ուսումնասիրել էր էջմիածնի և Հովհաննավանքի

մատենադարանները, ի վերջո այն եզրակացության էր հանգել, որ Սիրաբի գիրքը ամբողջական տեսքով չի հասել հայերեն. «Քանզի մեզ ոչ գոյր լիապէս, այլ ծաղկաքաղ արարեալ»⁴⁷: Եվ նկատի ունենալով, որ Վուլգատայում այն ամբողջական է, ինքը ևս թարգմանել է ամբողջությամբ: Պատմաբան Լեոն իր երկու աշխատություններում հայտնել է այն միտքը, թե Սիրաբի գիրքը Ոսկանը թարգմանել է ավել Ստեփանոս Լեհացուն⁴⁸: Սակայն իրականում ինչպես երևում է Ոսկանի գրածներից, թեև ինքը սկզբում այդ հանձնարարել էր թարգմանել Ստեփանոս Լեհացուն, բայց վերջինս այդ գործը ուշացնելու պատճառով հայ անդրանիկ Աստվածաշունչի տպագրողները ստիպվեց թարգմանել այն ամբողջությամբ: Ոսկանը լավ գիտեր նաև Սաղմոսավանքի ձեռագրերը. Եզրասի Դ գիրքը թարգմանելու առթիվ նա գրել է. «Նաև զլորորդ գիրս Եզրասայ՝ որ մեզ ոչ գոյր ներմատենից Աստուածայնոց, այլ միայն ի դրարկս Սաղմոսավանից՝ զայն ևս ծայրաքաղ արարեալ...»⁴⁹: Ահա թե ինչու այս ևս Ոսկանը ստիպված թարգմանում է լատիններից: Ոսկանը լատիններից է թարգմանել նաև Բարուքի Զ գլուխը⁵⁰, որը չկար իր նախագաղափար օրինակում և որոնած մյուս գրչագրերում: Սակայն ըստ Վիեննայի կայսերական մատենադարանում գտնվող մի ձեռագրում եղող սովյալների, հետագայում հիշյալ Զ գլուխը գտնվել է նաև հայկական ձեռագրերից մեկում⁵¹:

Ոսկան Երևանցին, ինչպես նշում է ինքը, դարձյալ լատիններից թարգմանեց իր Աստվածաշունչի առաջաբանությունը և վերջում գետեղած նյութերի ցանկը: Դարձյալ Ոսկանն էր, որ Վուլգատայից թարգմանելով

⁴⁷ Տե՛ս Ուկանի հրա. Աստվածաշունչը, էջ 832:

⁴⁸ Լեո, Հայկ. տպագրության պատմություն, Ա, էջ 268, և նույնի Հայոց պատմություն, Գ, էջ 448:

⁴⁹ Տե՛ս Ոսկանի հրա. Աստվածաշունչը, էջ 832:

⁵⁰ Տե՛ս Զոհրապյանի հրա. Աստվածաշունչը, էջ 594-ի տողատակի ծանոթագրությունը:

⁵¹ Վիեննայի կայսերական Մատենադարանի № 4 ձեռագրում (որ կոչվում է «Համեմատություն ձեռագրաց սուրբ գրոց» և գրված է 1795 թ. Տրիեստում՝ Մխիթարյան հայրերից մեկի կողմից) գրված է հետևյալը. «Վեցերորդ գլուխն Բարուքայ թղթոյն ի մի օրինակում միայն գտանեցաւ, և այն ևս ոչ էր յարմար ընդ տպագրեցելոյն վասն որոյ ոչ եղև համեմատել, կարծէի թէ Ոսկան վարդապետն ոչ տեսանելով ի մէջ Հայոց, ինքն նորոգ թարգմանեալ է, դայս ասացի վասն անհամեմատութեանն և ոչ հաւաստի կարծեօք: (Տե՛ս Հ. Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց կայսերական Մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1891, էջ 10)»:

իր Աստվածաշնչի վերջում բերեց Զերոնի-մոսի (իմա Հերոնիմոսի) դրվածքները:

Ոսկանյան Աստվածաշնչի բովանդակության խնդրում բանասիրության մեջ Մես-րոսը եպիսկոպոս էր: Տեր-Մովսիսյանը առաջ է քաշել այն հարցը, թե Ոսկանը իր մոտ ունենալով Ղազար Բարեբրդացու օրինակի վրայից արտագրված մի ձեռագիր Աստվածաշունչ, նրա վերջում խմբագրողի կողմից լատինե-րենից թարգմանված Աստվածաշնչի նյութերի ցանկը իբրև պատրաստ դրոշմով կցեց իր տպագրած մատյանի վերջում⁵²: Որ Ոսկանը իր ձեռքում ունեցել է Ղազարի⁵³ Աստվածաշունչը, այդ հաստատ է, և մեր նախորդ հատվածում անդրադարձանք այդ հարցին: Մենք այն կարծիքին ենք, որ Ոսկանը հիշյալ ցանկը պատրաստի չվերցրեց Ղազարի Աստվածաշնչից: Ինչպես հայտնի է, Ղազարն ու Ոսկանը իրենց Աստվածաշնչերի վերջում բերել են Աստվածաշնչի անունների և նյութերի ընդարձակ ցանկեր: Մեր խոսքը վերաբերում է լատինական անունների ցանկին, Ղազարը այդ մասին իր հիշատակարանում գրել է. «Եւ զմիւս ցանկն, որ զկնի նորին արարի (իմա հայկական ցանկից հետո—

⁵² Месроп Тер-Мовсисян, նշված աշխատությունը, էջ 31:

⁵³ Նկատի ունենալով, որ վերջերս դարձյալ Գեր. Կարեգին եպիսկոպոս իր վերոհիշյալ հոգվածի ծանոթագրություններից մեկում գրում էր, որ «Ստուգելի պարագաներն մեկը այս Ղազար վարդապետի ինքնուրույն է և կատարած գործի նկարագրին և տարրություն պարզան է, որ կկարողի առանձին հետախուզության («Հասկա», № 3—5, էջ 149-ի ծնթ. 17) ուստի լրիվ համաձայն լինելով, որ Ղազարի Աստվածաշունչը առանձին հետազոտության նյութ կարող է կազմել, այստեղ մենք բավարարվում ենք նրա ինքնուրույն վերաբերյալ մի քանի խոսք ասելով: Ղազարը բնիկ Բաբերդցի էր, նա 1619 թ. լվովում ծաղկեց իր իսկ խմբագրած Աստվածաշունչը, նրան կցելով նաև տաղաչափյալ հիշատակարան: (Տե՛ս Մատենադարանի ձեռ. № 351): Ոսկանը, իբրև իրեն ժամանակակցի, Ղազար Բաբերդացուն ճանաչում է իբրև Վալաբացի, քանի որ նա իր կյանքի վերջին տարիներին անցնելով Մուղղվա, վարում էր տեղի հայերի հոգևոր առաջնորդի պաշտոնը: Ղազարի Վալաբացի անունը ծագել է Մուղղվա անունից, որովհետև վերջինս հայերի մոտ հայտնի է եղել նաև Վալաբիա ձևով: Ղազարը հակառակ իր բազմադարձ վիճակին Սուլավայում ընդօրինակել և ծաղկել է մի քանի Ավետարաններ (1624, 1629 թթ.) և մի Սաղմոս (1631 թ.) ևն: Նա վերակառուցեց Սուլավայի նշանավոր առաջնորդանիստ հայկական Զամբա վանքի պարիսպը և այլ շինություններ արեց: Նա մահացավ 1634 թ.:

Ս. Կ.), առի ղօրինակն ի լատինացուց...»: Ոսկանը ևս մյուս կողմից ինչպես Աստվածաշնչում, այնպես էլ իր տպագրած Առաքել Դավրիժեցու պատմության վերջում գրել է. «Նաև ղցանգս լատինացուց Աստվածաշնչոյն թարգմանեաց՝ որով ընթերցողն դիտաւ պտանէ ի մէջ գրոց պինդընդիսն իւր՝ որոյ և կարօտանայ...»⁵⁴:

Հիշյալ ցանկերը նույն թարգմանչից չլինելը ապացուցանելու նպատակով, երկու Աստվածաշնչերի սկզբից բերում ենք իբրև նմուշ մի քանի անուններ իրենց բացատրություններով հանդերձ:

Ղազար վարդապետ Բաբերդացի կամ Վալաբացի (ձեռ. Աստվածաշունչ Մաշտոցյան Մատենադարանի № № 201 և 351, 1619 և 1660 թթ.)

Աբբահայր տեղ

Գղ հոռմց. Ը. Գաղատ. Գ. Կ.

Աբղմլլէք, մարտակից և հայեցող Երեմիայի, Երմ. Ը է Աղատեալ ի սրոյ քաղղէացուց, Երեմ. Գթ 1գ 1է:

Աբեղնազվր, առաքեցաւ ի հնոց բորբոքեալ, Դան. Գ ը. Կոչեցաւ Ազարիայ, Դան. 1գ.

Աբղիաս, պահեաց զմարգարէսն ան յայ, Գ թգր. 1ը, Գ. 1գ.

Այդոն, դատաւոր իդի, Դատ. 1ր, 1գ.

Ոսկան վարդապետ Երևանցի

(Աստվածաշունչ տպ. 1666—1668 թ.)

Աբարիմ, լեան. ուստի երբ մեռանկոյցն էր Մօսէս. զերկիրն քանա[ն]ցուց նախանկատեաց, Թու, 2111+27 12+33. 4է, 2 օրին. 32. 49.

Աբբա Հայր, Մարկ. 14, 36, Հոռմ. 8, 15, Գաղա, 4, 6. Աբղիաս, Բաթոյս և կերակրեաց զմարգարէսն Տն 3 թագ. 18, 4, 13.

Աբղիմլլէք, փոխանկամարտ և ձեռնտու Երեմիայի, Երեմ. 38, 7, Աղատի ի սրոյ քաղղէացուցն, 39, 16, 17, 18:


Աբղոն, դատաւոր ի մէջ իլի, Դան. 12, 13:

Աբեղնազով, յորշորջի Ազարիաս, Դան. 1, 7, արկանի ի հնոց բորբոքեալ, 3, 21:

Կարծում ենք, որ վերոհիշյալ համեմատությունն իսկ բավարար է ցույց տալու համար, որ նրանք իրարից անկախ արված երկու տարբեր թարգմանություններ են որոշ խմբագրություններով հանդերձ, այդ տարբերությունները զգացվում է ոչ միայն անունների կամ նյութերի տարբեր տեղադրումը, այլև իրենց թարգմանական լեզվով ու բառապաշարով: Ուստի Ոսկանը չի վերցրել Ղազարի գործը և կցել իր գործին, այլ նա միայն հետևել է վերջինիս օրինակին, և նպատակ ունենալով իր գործը դարձնել լիա-

⁵⁴ Տե՛ս Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № № 351 և 201:

⁵⁵ Տե՛ս Առաքել Դավրիժեցի ... 1669 թ., էջ 636:



կատար, ինքը ևս այն թարգմանել է ու կցել իր Աստվածաշնչին: Ոսկան Ծրեանցին Ղազարին հետևեց անշուշտ նաև վերջինիս կողմից դեռ 1619 թ. լվովում ըստ Վուդատայի կատարված ղլխաբաժանումներին, տնատմանն ու տնահամարներին և վկայություններին, թեև երկուսի էլ աղբյուրը լատինական Աստվածաշունչն էր:

Ոսկանը Վուդատայի հետևողությամբ իր հավելվածում զետեղեց նաև «Աղօթք Մանասի թագաւորի» պարականոն գրվածքը, որը անշուշտ քաղել էր մի այլ գրչագրից, քանի որ իր ընտրած օրինակում այն չկար նա բերել է նաև չորս ավետարանիչների նախադրությունները, որոնց համեմատությունը ցույց տվեց, որ վերցված են իր օրինակից: Ոսկանը իր հրատարակած ցանկերից հետո Աստվածաշնչի նյութերը փակել է Հեթում Բ-ի հայտնի բանաստեղծությամբ, որի «Ոտանաւոր բարեպաշտ թագաւորի Հայոց Հեթում» խորագիրը ինքն է հորինել: Այսպիսով Ոսկանը իր տպագրած Աստվածաշնչում ոչինչ չհայտնելով հանդերձ իր օրինակի մասին, ինքը ևս իր հրատարակությունը փակում էր իր օգտագործած արքայական գրչագրի նման միևնույն բանաստեղծությամբ, դրանով իսկ կարծես մի կերպ հուշելով մեզ իր օրինակի ինքնության մասին: Մի հարց, սակայն, որը ինչպես տեսանք, երկար ժամանակ բանասիրության մեջ թեր ու դեմ կարծիքների առիթ էր տվել:

Դ.— Արքայական Աստվածաշնչի և ոսկանյան հրատարակության բնագրային համեմատությունը

(Ոսկան վ. Երեանցու նշումները աբխազական ձեռագրի էջերում)

Սույն հոդվածի ներկա գլուխը վճռական նշանակություն ունի Հեթում Բ-ի պատվերով գրված մագաղաթյա Աստվածաշունչը ոսկանյան հրատարակության իբրև հիմք ծառայելը ապացուցելու գործում: Ներկա համեմատությունը երկու Աստվածաշնչերի միջև լուկ արտաքին զուգահեռների անցկացում չէ, այլ արքայական Աստվածաշնչի վրա հետագա մի այլ ձեռքով կատարված և մեծ թիվ կազմող նշումների քննարկումն է և որը ցանկանում ենք մանրամասն ուսումնասիրության նյութ դարձնել: Եվ իսկապես, արքայական Աստվածաշնչի էջերի գնումը երևան է բերում ռաց-սրճագույն թանաքով արված հետագայի մեծ թվով նշումներ, որոնք սփռված են Հին կտակարանային մասում, և որոնք էլ կարելի է բաժանել մի շարք խմբերի: Գրչագրի գրեթե բոլոր էջերին

երևում են այլ ձեռքով կատարված տառային, բառային և շեշտային նշումներ: Կան նաև երբեմն ընդարձակ պարբերություններից բաղկացած հավելումներ, մեծ թիվ են կազմում տնատման նշաններն ու տնահամարները և աստվածաշնչային վկայությունները:

Այսպիսով, ներկա համեմատությունը, որ կատարելու ենք ստորև, անմիջականորեն չի բխում հնագույն ձեռագրի գրչությունից, այլ նկատի ենք առնում առաջին հերթին հետազոտում արված նշումները և այս վերջինների համեմատությունը ոսկանյան Աստվածաշնչի հետ: Մեր համեմատությունները երկու Աստվածաշնչերի միջև ցույց են տալիս, որ վերոհիշյալ բոլոր նշումներն ու հավելումները նկատի են առնված Ոսկան Ծրեանցու կողմից տպագրված Աստվածաշնչում: Այստեղից էլ բնականաբար հարց է ծագում, թե ո՞ւմը կարող են լինել հիշյալ բոլոր նշումները: Պատասխանը կարծում ենք, որ շատ պարզ է, քանի որ հավելումները կատարված են հետագայի գրով և այլ թանաքով, և այդ բոլորն էլ մուտք են գործած Ամստերդամում տպագրված ոսկանյան Աստվածաշնչում, ապա սխալված չենք լինի, եթե ասենք, որ դրանց հեղինակը ոչ այլ ոք է, քան հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրողն ու հրատարակողը՝ Ոսկան վ. Ծրեանցին, և որ տարիներ առաջ այդ մասին Կարապետ եպիսկոպոսը Մկրտչյանի կողմից միանգամայն ճիշտ էր, և այդ այժմ ապացուցվում է անվիճելիորեն հիշյալ նշումների բազմակողմանի համեմատության և քննարկման միջոցով:

Ներկա համեմատությունը կատարելիս մեր առաջ խնդիր ենք դրել՝ հիմնականում պատասխանելու երկու հարցի: Առաջին հարցը, ինչպես նշեցինք, Հեթում Բ-ի Աստվածաշնչի իբրև հիմք օգտագործումն է Ոսկան Ծրեանցու կողմից և այդ խնդրի վերջնական լուծումը: Իսկ երկրորդը՝ արքայական աստվածաշնչի և ոսկանյան հրատարակության բնագրերի համեմատության միջոցով պարզաբանումն է այն հարցի, թե Ոսկանի մինչև այժմ բանասիրության կողմից մատնանշված շեղումները արդյո՞ք ամբողջությամբ պատկանում են իրեն, թե մասամբ բխում են նաև իր իսկ օգտագործած գրչագրից:

1. Ոսկան Ծրեանցու կատարած էջակալումը.— Ամենից առաջ արքայական Աստվածաշնչի էջերի վրա մեղ հանդիպում են սրբագրությունների նույն դույնը ունեցող թանաքով արված էջահամարներ: Ոսկան Ծրեանցին էջահամարներ է նշել Աստվածաշնչի Հին Կտակարանի մասում, համարա-

կալելով 1—856 էջերը: Նոր Կտակարանի մասը նա հարկ չի դրացել էջակալելու, քանի որ այն ուղղակի տպագրության համար չի օգտագործվել, այլ ինչպես նշեցինք, Ոսկանը իր ձեռքին ունեցել է հիշյալ մասի արտագրությունը՝ արված նույն գրչագրից, և որի վրա էլ կատարել է իր ցանկացած սրբագրությունները: Հին Կտակարանով ավարտված էջակալումը հետագայում մատիտով շարունակել է մի ուրիշը և հասցրել է այն մինչև ամբողջ ձեռագրի վերջը:

2. ԳԻՐԵՐԻ ԽՈՐԱԳՐԵՐ.— Նախորդ գլխում երբ մեջ բերեցինք Հեթում Բ-ի Աստվածաշնչի ընդարձակ բովանդակությունը, գրքերի խորագրերը նշելիս թվեցինք նաև այլ ձեռքով հետագայում գրված վերնագրերը: Այստեղ մեզ մնում է համեմատությունների միջոցով ճշտել երկու հարցը: Նախ տեսնել, թե Ոսկանը Հեթում Բ-ի Աստվածաշնչի գրքերի խորագրերին ի՞նչքանով է հավատարիմ մնացել, և երկրորդ՝ պարզել նրա օգտագործած նոր վերնագրերի աղբյուրը:

Համեմատությունը պարզում է, որ Ոսկանյան Աստվածաշնչի գրքերի բոլոր գրքերի խորագրերը մեծ կամ փոքր չափով տարբերվում են Հեթում Բ-ի գրչագրից: Նույնիսկ այն դեպքում, երբ նա հավատարիմ է մնացել գրչագրի վերնագրին, դարձյալ տեսնում ենք ավելացրած նույն անվան եբրայեցիներն անվանումը, որի աղբյուրը, ինչպես ցույց ենք տալու, դարձյալ Վուլգատան էր: Բերենք մի օրինակ. Հեթումի Աստվածաշնչի գրքերից մեկը վերնագրված է միայն «Գիրք Յեսուայ որդու Նաեայ»⁶⁶, Ոսկանը այն հրատարակել է այսպես. «Գիրք Յեսուայ որդու Նաեայ, որ ասի եբրայեցուցն Յէհոսուայ»⁶⁷: Որպեսզի պարզ լինի մեր ասածը, այժմ բերենք նաև նույն գրքի վուլգատյան խորագիրը. «Liber Josue, Hebraice Jehcsua»⁶⁸: Այսպիսով, Ոսկանը այն խորագրում աշխատելով հավատարիմ մնալ իր գրչագրին, սակայն միաժամանակ նպատակ ունենալով նաև այն ամբողջացնելու, դարձյալ դիմել է Վուլգատային և այժմ նրա այս խորագիրը մեզ վրա թողնում է հայերեն և լատիներեն Աստվածաշնչից կազմված համահավաք բնագրի տպավորություն:

Ոսկանը իր ձեռքով Հեթումի գրչագրի անխորագիր գրքի վերին մասում գրել է. «Առաջներորդ գիրք Սամուիլի, հնով առաջներորդ Թագաւորութեանց»⁶⁹, ապա տպագրելու

ընթացքում այն դարձրել. «Գիրք առաջներորդ Սամուիլի, դոր մեք առաջներորդ Թագաւորութեանց ասեմք»⁷⁰, իսկ Զոհրապյան քննական հրատարակության մեջ այն խորագրված է «Թագաւորութեանց առաջին», ուստի որտեղից է դալիս Ոսկանի նոր խորագիրը, արդյոք «դոր մեք առաջներորդ Թագաւորութեանց ասեմք» պարբերությունը գրելով հնարավոր էր, որ նա հայկական բնագրի խորագիրը նկատի ունենար: Քննարկումը ցույց է տալիս, որ այդ այդպես չէ, որ ինչպես Ոսկանի վերնագրի սկզբի, այնպես էլ մեր մատնանշած երկրորդ մասը բառացիորեն դարձյալ բխում են Վուլգատայից, այնտեղ գտնում ենք հետևյալ վերնագիրը. Liber primus Samuelis, quem nos primum Regum dicimus⁷¹:

Նոր Կտակարանի Կաթողիկոս, ինչպես նաև Պողոս առաքյալի թղթերը հրատարակելիս, Ոսկանը ի տարբերություն իր օրինակի և հայկական մյուս Աստվածաշնչերի, հետևելով Վուլգատային, առաքյալների անունների կողքին բոլոր դեպքերում ավելացրել է «Երանելի» բառը, որը լատիներեն «Beati» բառի թարգմանությունն է:

Իր օգտագործած գրչագրի գրքերի խորագրերը խմբագրելիս, Ոսկանը այդ մասին նշումներ չի կատարել իր գրչագրում, բացի մի քանիսից, որոնց վերնագրերը հնագույն դրիշը մոռացել էր դրել իր ժամանակին: Պետք է կարծել, որ Ոսկանը չի ցանկացել եղծել նաև թանկագին գրչագրի գեղեցիկ խորագրերը և իր սրբագրությունները կատարել է Աստվածաշնչի տպագրության փորձերը ուղղելու ընթացքում:

3. ԳԼԽԱԿԱՐԳՈՒՅՈՒՆԸ.— Ոսկան երևանցին իր Աստվածաշնչում և Առաքել Դավրիժեցու պատմության հիշատակարանում անդրադարձել է նաև գլխավորագրության հարցին: Նա դիմելով Հակոբ Դ Զուղայեցի կաթողիկոսին դրել է. «...Վասն որոյ և մեք ով Հայր պատուական ըստ բարձրագունից հրամանաց քոց արարաք, գլխատելով և տնաստելով...»⁷², Ոսկանի կողմից գրված իր կենսագրության մեջ ևս գրված է. «...Գլխատեաց և տնատեաց՝ որպէս տեսանելի է ներ տպեցելոյ Աստուծաշնչոյն...»⁷³, Սակայն Ոսկանը անշուշտ նկատի ունենալով դեռ 13-րդ դարի վերջում Հեթումի կողմից իր օգտագործած ձեռագրում արված գլխաբաժանումները, նույն հարցի շուրջ գրել է նաև հետևյալը.

⁶⁶ Մաշտոցյան Մատ.—ի ձեռ. № 180, էջ 97ր:

⁶⁷ Ոսկանի Աստվածաշնչում, էջ 215:

⁶⁸ Biblia Sacra Vulgatae editionis... Ed. Secunda, tomus I. Ratisbonae. 1863, p. 343.

⁶⁹ Մաշտոցյան Մատ.—ի ձեռ. № 180, էջ 122:

⁷⁰ Ոսկանի Աստվածաշնչում, էջ 273:

⁷¹ Biblia Sacra Vulgatae ... p. 425.

⁷² Ոսկանի Աստվածաշնչում, ընթացականք:

⁷³ Առաքել Դավրիժեցի..., 1669 թ., էջ 636:



«Ձգլխատեալսն ի նախնեաց ես ևս տնատեցի ըստ դաղմատացոցն, զթիւսն և զհամաձայնութիւնսն առադրեցի մի ըստ միողէ՝ որպէս էր հնար...»⁶⁴:

Սակայն թերի կլինեմ մեր խոսքը այս հարցում, եթե անտես առնենք Ոսկանի կողմից մի շարք գլխակարգութիւնների վերաբերյալ կատարած ճշգրտումները: Նա օգտվելով հանդերձ իր գրչագրի ըստ լատինականի արված հնագույն գլխակարգութիւնից, ամենայն բժախնդրությամբ վերստին համեմատելով դրանք Վուդատայի հետ, պարզեց, որ որոշ գրքերի բովանդակութիւնը հայերենում հետ ու առաջ էր դրված, սակայն բոլոր դեպքերում էլ պահպանված էր նրանց գլխակարգության հերթականութիւնը: Ոսկանը համեմատութիւններից հետո ճշգրտեց նրանց գլխակարգութիւնը, սակայն իր հրատարակության մեջ պահպանեց գրչագրի դասավորման եղանակը: Նա այդ մասին դրել է. «Ձմերայինն շարադրութիւն անխախտ պահել և զգլխատութիւնս և զտնատութիւնս ըստ թուոյ նոցա յօրինել, որպէս ահա տեսանես ի գիրս Եսթերայ, Եդրասայ, Սաղոմոնի, Դանիէլի և այլոց»⁶⁵: Ոսկանը Եսթերի գրքի շարակարգութիւնը թողել է իր գրչագրի (իմա հայկական Աստվածաշնչերի) նման և փոխել է միայն նրա գլխակարգութիւնը հետևյալ հերթականությամբ. ԺԱ—ԺԲ, Ա—Գ, ԺԳ, Դ, ԺԵ, Դ, ԺԶ—ԺԾ, Ե—Ը, ԺԶ, Ը—ԺԱ⁶⁶: Առակաց գրքի վերջի մասում նույնպես, պահպանելով հայկական շարակարգութիւնը ըստ լատինական բովանդակութիւն, նոր գլխակարգութիւն է մտցրել հետևյալ ձևով. ԻԴ, Լ, ԻԴ, Լ, ԼԱ, ԻԵ—ԻԹ, ԼԱ⁶⁷: Դանիէլի գիրքը դեռ գլխակարգված էր հնում այսպես. նախ ԺԳ, Ա—ԺԲ, ԺԴ: (Միայնամբ Ոսկանի մոտ տպագրվել է ԺԳ)⁶⁸:

Ղազար Բաբերդացու Աստվածաշնչում ևս կան արված լատինականի հետեւությամբ գլխաբաժանումներ, սակայն պետք է նշել, որ տվյալ հարցում վերջինս այնքան հետեւողական չի եղել, ինչպես Ոսկանը: Թե ինչքան ճիշտ էր վերաբերվել Ոսկան Երեւանցին վերոհիշյալ գրքերի գլխաբաժանումները կատարելիս, այդ կարելի է հետևեցնել նաև նրանից, որ Զոհրայայանը և Բագրատունի իրենք քննական Աստվածաշնչերի հրատարակութիւններում պահպանել են անդրանիկ

տպագիր Աստվածաշնչում կիրառված գլուխների նոր կարգը:

4. Տեւանմարեներ.— Կարևորագույն գործերից մեկը, որ Ոսկանը կատարեց, այդ ամբողջ Աստվածաշնչի տնատումն էր և տնահամարների գրանցումը: Նա բաց-սրձագույն նույն թանաքով արքայական ձեռագրի ամբողջ Հին Կտակարանի մասում թողել է տնահամարներ, ինչպես նաև վերջիններիս սահմանները ցույց տվող օղակաձև մեծ թվով նշաններ: Ձեռագրում տնահամարներ չունեն միայն նախադրութիւններ ու գլխացանկեր բովանդակող էջերը, որոնք արդեն իսկ կարիք չունեն տնահամարների, իսկ մյուս կողմից էլ դրանք Ոսկանը շարատարակեց իր Աստվածաշնչում: Ոսկանը առանց տնահամարների է հրատարակել Մակարայեցվոց Գ գիրքը միայն, որը չկար իր օգտագործած Վուդատայում: Պետրոս Լատինացին ևս այդ գիրքը չի տնատել, քանի որ նրա Աստվածաշնչը փաստորեն փոքրաչափ պատճենահանումն էր ոսկանյան հրատարակության: Մխիթար Աբբան էր, որ թեև դարձյալ վերահրատարակեց Ոսկանի գործը, սակայն կատարեց բնագրային սրբագրութիւններ, այստեղ նա գլխակարգեց և տնատեց նաև Մակարայեցվոց Գ գիրքը, այդ մասին նշելով նաև իր հիշատակարանում⁶⁹:

Ստորև ցույց ենք տալու բոլոր այն էջերը, ուր այժմ դեռ պահպանվում են թանաքով արված Ոսկանի տնահամարները: Բաց մնացած համարները, նախադրութիւններ և գլխացանկեր բովանդակող էջեր են և կամ հետագայում ջնջված էջեր: Գրքերի և կամ գլուխների սկզբնական էջերում, ուր կան նկարված կիսախորաններ, լուսանցադարձեր և կամ զարդագրեր, հաճախ տնահամարներ չեն երևում: Սակայն ուշադիր աչքով նայելիս երևում են թվահամարների հետքեր և երբեմն էլ միայն քերվածի հետքեր, որոնք արվել են հետագայում՝ ձեռագրի մանրանկարչական այդ էջերը մաքրելու նպատակով: Տնահամարների մեծ մասը ջնջված են քերիչով, իսկ փոքր մասն էլ՝ դեղով:

⁶⁹ Մխիթար Աբբան Մակարայեցվոց Գ գիրքը Ոսկանի կողմից առանց գլխակարգության և տնահամարների տպագրվելու առթիվ գրում էր, որ թեև այդ գիրքը լատին Աստվածաշնչի որոշ օրինակներում բացակայում է, սակայն «ի յոմանս գոյ, որոց ինքն ոչ է հանդիպեալ, որպէս զի և զայն ըստ այնց գլխակարգեցէր» (Տե՛ս Մխիթարի հրտ. Աստվածաշնչը, էջ 1271): Այնինչ հանդիպելով նման բաժանումներ ունեցող բնագրի, ինքը ևս իր տպագրում կիրառել է այն: Ավելացնենք նաև, որ Ղազար Բաբերդացու կամ Վալաբացու Աստվածաշնչում ևս Մակարայեցվոց Գ գիրքը գլխաբաժանումներ և տնահամարներ չունի:

⁶⁴ Ոսկանի Աստվածաշնչը, էջ 831:

⁶⁵ Նույն տեղում, էջ 831:

⁶⁶ Նույն տեղում, էջ 540—552:

⁶⁷ Նույն տեղում, էջ 11—110—117:

⁶⁸ Նույն տեղում, էջ 11—366—387:

**Ոսկան Երևանցու ձեռնով արժանապատիվ
Աստվածաշնչում արված և այժմ էլ Երևանցո
տնահամարների էջերը**

18բ—25ա, 29բ—47ա, 51ա—62ա, 63բ—80ա, 82ա—
96ա, 98բ—107ա, 109բ—119բ, 123բ—135ա, 291ա—
292ա, 293ա—296ա, 297, 298բ—310ա, 311ա—313ա,
314ա, 316ա—318ա, 320բ—323ա, 324բ—329բ, 330բ—
331ա, 334բ—336բ, 338ա—339բ, 341բ—347ա, 350ա—
352ա, 353ա—355բ, 357ա—358բ, 360բ—364ա, 365ա—
376ա, 377ա—378ա, 379ա, 380ա, 381ա, 382ա—383բ,
384բ—386ա, 387, 388բ—389ա, 390ա, 391բ—392բ,
394ա—396բ, 397բ—398ա, 399ա, 400ա, 401ա, 402ա—
404ա, 405ա—406բ, 408բ—425ա, 426բ—431ա, 432բ—
433ա, 434բ—450բ:

Բացի տնահամարներից, ձեռագրում նույն
ձեռքով ավելացված են նաև յուրաքանչյուր
գլխի ներքևում Ա, Բ, Գ և այլ հայկական
գլխագրեր, որոնք պահպանված են նաև
ասպարուկյան մեջ:

5. Վկայություններ.— Ղազար Բաբերգա-
ցին բացի գլխաբաժանումներից և տնահա-
մարներից իր Աստվածաշնչում զետեղել էր
նաև վկայություններ, անշուշտ այդ բոլոր
առավելությունների հետևանքով էր, որ նրա
գործը իր ժամանակին ընդունելության ար-
ժանացավ և գրիչների կողմից բազմացվեց:
Ինչպես տեսանք, Ոսկանը ևս իր ձեռքով
ունենր Ղազարի օրինակի վրայից 1660 թ.
կատարված մի արտագրություն, որը իր վե-
րոհիչյալ հանգամանքներով հրապուրելով
հանգրծ Ոսկանին իր տպագրելի գործի հա-
մար, վերջինս սակայն գտավ, որ նա հետա-
գա գրիչների կողմից աղճատված է, ուստի
ինք ևս ստիպվեց դիմել Ղազարի նույն աղ-
բյուրին՝ Վուղատային:

Ստորև ցույց ենք տալիս արքայական ձե-
ռագրի բոլոր այն էջերը, ուր Ոսկանը նշում-
ներ է արել աստվածաշնչային վկայություն-
ների վերաբերյալ իր տպագրելի գործի հա-
մար և այդ բոլորը ապա հրատարակել իր
Աստվածաշնչում: Ձեռագրում երբեմն հան-
դիպում են վկայության խոնացած նշում-
ներ, որոնք ջնջված են հավանաբար դեղով,
կան նաև բոլորովին քերված վկայություն-
ներ: (Տե՛ս ձեռագրի 107ա և այլ էջերը):

**Արժանապատիվ Աստվածաշնչում Ոսկան
Երևանցու կողմից գրված վկայությունների
էջերը**

1, 2—14ա, 15, 17ա—22ա, 23ա—26ա, 29ա—30ա,
31բ—40բ, 41բ—45ա, 46ա—47ա, 50բ—54բ, 56ա—
58բ, 59բ—60ա, 61ա, 62ա, 64բ—65ա, 66, 67բ—79ա,
82ա—96ա, 98ա—104ա, 105բ—107բ, 109բ, 110բ—
112բ, 113բ—115ա, 117, 120ա, 122բ, 124ա—131ա,
132բ—133ա, 134ա—135ա, 136ա, 137բ—143ա, 144,


145բ—148ա, 149, 151ա—160ա, 161, 162բ—163ա,
168ա—173բ, 174բ—182բ, 183բ—186բ, 188, 189բ—
192բ, 193բ, 195ա, 196ա—198ա, 199ա, 200բ, 203բ—
204ա, 205ա—206ա, 211բ—212բ, 213բ—215ա, 216ա,
217, 218բ, 220ա, 223բ—224ա, 225ա, 229ա, 230ա,
231ա, 232ա, 233ա, 236, 237բ, 238ա, 239, 240բ,
241ա—242բ, 244ա, 245, 249ա, 250բ, 254բ, 256բ,
266ա, 275, 277ա, 288ա—291ա, 292բ—295բ, 296բ—
298ա, 301ա, 303ա—304բ, 305բ—306բ, 307բ—308ա,
309ա—312ա, 316ա—318ա, 320ա—329ա, 330ա—
331ա, 334ա, 335բ—336բ, 341ա—342ա, 343բ—347ա,
350, 352ա, 353ա—357ա, 357բ, 360ա, 361բ—362ա,
363ա—364բ, 366բ—367բ, 368բ, 371ա, 372ա—386ա,
387ա—389ա, 390ա—391բ, 392բ—398ա, 399բ, 403բ,
404բ, 405բ—406ա, 408ա—412ա, 413ա—416ա, 417ա—
418ա, 419—421բ, 422բ, 426ա—427ա, 428ա, 429ա—
430ա, 432, 434բ—437բ, 438բ—440ա, 441ա, 442,
443բ—444ա, 445ա—447ա, 449ա—450ա:

Ձեռագրում վկայություններին վերաբերող
հատվածը նշելու նպատակով, Ոսկանը ամե-
նուրեք նկատի առնված առաջին բառից ող-
ղահայաց երկու գծիկ է քաշել, որը և նույ-
նությամբ պահպանել է իր տպագրության
մեջ:

6. Փակագծեր.— Ոսկան Երևանցին Հե-
թումի Աստվածաշնչը Վուղատայի հետ
համեմատելու ընթացքում տարբեր է, որ
հայկական ձեռագրում որոշ հատվածներ ա-
վել են, քան լատինական Վուղատայում,
ուստի հայկական Աստվածաշնչի ամբողջու-
թյունը պահպանելու նպատակով և միև-
նույն ժամանակ այս վերջիններս զանազա-
նելու համար, ինչպես ինքն է ասում, վերցրել
է «Ըղնգնաձև» նշանների, այսինքն փա-
կագծերի մեջ: Ահա թե ինչ է ասում Ոսկանը
այդ մասին իր «Առ ընթերցողս» գրված-
քում. «Նոյնպէս և զաւելեալն ի մեզ՝ յորժամ
տեսանիցես բազմաւ տողով ոչ տնատեալ,
գիտասցես թէ այնքան բանն աւելորդ է առ
մեզ, մանաւանդ զի ըղնգնաձև նշանն լատի-
նացւոց եղաք ի մէջ, որքանք պարունակին
նիւր այնց ըղնգնաձևոց նշանացն, թէ բառ,
թէ բան, այնքանքն են աւելորդք, և առա-
ւելեալք քան զլատինացւոցն, որպէս գտանես
ի գիրս Թագաւորաց, Սսթերայ, Առակացն,
և այլոց: Բայց գոն ևս յայնց նշանացն, որք
ըստ լատինացւոցն են եղեալք»⁷⁰:

Ձեռագրի բազմաթիվ էջերում հիշյալ փա-
կագծերից շատ կան, որոնք նույն տեղերում
ուղահայանվել են նաև ոսկանյան հրատարա-
կության մեջ: Բերենք իբրև նմուշ մի քանի
էջեր միայն այն փակագծերից, որոնք գրված
են Ոսկանի կողմից ձեռագրում, և ցույց տանք
նաև տպագրի տվյալ էջերը, ուր դարձյալ
պահպանված են հիշյալ փակագծերը:

⁷⁰ Ոսկանի Աստվածաշնչը, էջ 832:



Ձեռ. էջ 123ա, համեմատել տպագրի էջ 275 (Ա. Թագ. Բ, 9):

Ձեռ. էջ 124ա, հմտ. տպ. էջ 278 (Ա. Թագ. Ե, 3):
Ձեռ. էջ 128, հմտ. տպ. էջ 288 (Ա. Թագ. ԺԴ, 42)
և այլն, և այլն:

7. Լատիններեն նշում.— Լատիններեն լեզվից մի նմուշ ենք գտնում պահպանված Հեթում Բ-ի Աստվածաշնչի 32ա էջում ելից գրքի Ը գլխի 12-րդ տնահամարը բովանդակող էջի ստորին լուսանցքում: Հիշյալ տնահամարի տակ գտնվող ժամադրությունն բառի վրա կա ծանոթության նշան, իսկ նույն էջի ստորին լուսանցքում դրված նույն նշանի կողքին գրված ենք տեսնում Լատիններեն լեզվով sponsio բառը, (տես 121-րդ էջի նկարը), որը տվյալ դեպքում նշանակում է վերոհիշյալ ժամադրությունն բառի Լատիններեն թարգմանությունը: Հայերեն Աստվածաշնչի հիշյալ հատվածը հետևյալ ձևով է գրված. «... Վասն ժամադրութեան գորտոյն», իսկ նրա Լատիններեն Վուլգատայում բովանդակում է նույն sponsio բառը, այսինքն pro sponsione ranarum»⁷¹:

Անշուշտ Լատիններեն այս բառի առկայությունը Հեթումի Աստվածաշնչում հետևանք էր Ոսկանի կողմից հայ բնագիրը Լատիններեն Վուլգատայի հետ համեմատելու համար կատարած աշխատանքների: Պետք է կարծել նաև, որ Պիրոմալից Լատիններեն դասեր ստանալու ժամանակ Ոսկանի համար մեծ օգտակարություն պետք է ցույց տված լինե՞ր հայերեն Աստվածաշնչի համեմատությունը: Հավանական է, որ այդ ժամանակ էլ նրա մեջ ծագեց հայ Աստվածաշնչում ըստ Լատինականի գլխաբաժանելու և տնտեսելու անհրաժեշտությունը, որը շատ կհշտացներ հայերեն և Լատիններեն Աստվածաշնչի օգնությամբ հայերենից Լատիններեն և Լատիններենից հայերեն թարգմանություններ կատարելը:

8. Բնագրային ծանոթություններ.— Ինչպես նշեցինք, Ոսկանը հայերեն Աստվածաշնչում Վուլգատայի հետ համեմատելու ընթացքում երբ պարզեց, որ հայերեն Աստվածաշնչի մի քանի գրքերի գլուխները բովանդակության առումով հետ-առաջություններ ունեն, այդ բոլորը տպագրության ընթացքում նկատի ունենալու համար ստիպվեց հաճախ ծանոթագրություններ թողնել իր գրչագրում: Բերենք մի երկու նմուշ: Ձեռագրի Ծաթերի գրքի 230ա էջի ձախ լուսանցքի վրա Ոսկանը գրել է հետևյալը. «Յո[անկաց] ԺԵ», այսինքն պետք է հասկանալ ըստ Լատինացվոց 15-րդ գլուխը,

սակայն ըստ հին գրչության այդ հատվածը հանդիսանում էր 4-րդ գլխի շարունակությունը: Ըստ Լատինական գլխավարգության, վերջինս Ծաթերի 15-րդ գլխի սկզբի մասն էր, սակայն ձեռագրի հաջորդ՝ 230բ էջում դարձյալ Ոսկանը գրել է Յո[անկաց] ԺԵ», քանի որ այս հատվածն էլ հանդիսանում էր հիշյալ 15-րդ գլխի շարունակությունը: Ահա այստեղ էլ Ոսկանը նկատի ունենալով սույն գլխի տարբեր մասերում բաժան-բաժան գտնվելը, լուսանցքին տվել է հետևյալ ծանոթությունը. «Սա շորս համարն է, երեք համարն այն երեսն է զոր նշանակեալ եմ»:

Ոսկանը նկատի առնելով նաև Առակաց գրքի հետ-առաջությունները, ձեռագրի 329բ էջում տվել է հետևյալ ծանոթագրությունը. «ԼԱ. սկիզբն է երեսուն և մէկին»: Այստեղ գտնվում են 31-րդ գլխի 1—9 տնահամարները: Հիշյալ գլխի շարունակությունը հայերեն Աստվածաշնչում տեղադրված լինելով շատ հետո, նույն ձեռագրի 331բ էջում դարձյալ հանդիպում ենք Ոսկանի մի այլ ծանոթագրությանը, ուր գրել է հետևյալը. «ԼԱ. կից է երեսուն և [մ]էկին», այսինքն նշվում է, որ այս հատվածը 31-րդ գլխի շարունակությունն է: Այստեղ են գտնվում նույն գլխի շարունակությունը հանդիսացող 10—31 տնահամարները:

Կարծում ենք, որ հիշյալ ծանոթագրությունները, Ոսկանի կողմից Աստվածաշնչի տպագրության մասնակից իր օգնականներին արված ցուցմունքներ էին, որպեսզի նրանք, համաձայն իր ճշգրտումների, նշեն մի շարք գրքերի ըստ Լատինականի փոփոխված գլխահամարները: Այստեղից էլ ոսկանյան հրատարակության մեջ մենք տեսնում ենք կիրառված բոլոր այն փոփոխումները, որ ինքը Ոսկանը կատարել էր իր գրչագրում:

9. Բնագրային սրբագրություններ.— Նախքան Ոսկան Երևանցու կողմից ձեռագիր Աստվածաշնչում կատարված սրբագրությունների մասին խոսելը, անհրաժեշտ ենք գտնում համառոտակի կանգ առնել ընդհանրապես նրա կողմից իր հրատարակության մեջ կիրառված ուղղագրության վրա: Առաջին հերթին պետք է նշել, որ Ոսկան Երևանցին ուշի ուշով իր հրատարակության ընթացքում հետևել է արքայական Աստվածաշնչի բնագրին և նկատի է ունեցել հին գրչի կողմից բնագրի բաց թողման հետևանքով հետագայում արված հավելումները և բոլորը հաճախ ընդգրկել է իր հրատարակության մեջ: Ոսկանը հետևել է նաև ձեռագրի պատվագրությանը և համառոտագրություններին: Ոսկանի Աստվածաշնչում կան ձեռագրի նման. ՏՆ, ԱԺ, Իէլացուց, ղո-

⁷¹ Biblia Sacra Vulgatae p. 100, no. 12.

րութի (Ձեռագրում՝ զաւրութի), օգնութեց (ձեռ. աւգնութեց), Վս (ձեռ. Վն) և այլն:

Աւ երկբարբառը բոլոր դեպքերում Ոսկանը դարձրել է օ, նույնպես այն բառերը, ուր ով է գրված եղել գրչագրում, այն տպագրելիս ամեն տեղ դարձրել է օ, այսպես օրինակ Յովհանն դարձրել է Յօհան, Մովսէսը՝ Մօսէս, Յովսիան՝ Յօսիա, Յովսէփը՝ Յօսէփ, Շմաւովը՝ Շմաւօն, Յովբը՝ Յօբ, Յովնաթանը՝ Յօնաթան, Յովնանը՝ Յօնան և այլն: Ոսկանը որոշ փոփոխություններ է արել նաև անձնանունների և տեղանունների մեջ: Ձեռագրում ամենուրեք գրված Սողոմոն անունը նա տպագրել է փոխելով Սաղօմօնի, իսկ Բաբելոնը վեր է ածել Բաբիլոնի, և այլն: Նման փոփոխությունները մեր կարծիքով դարձյալ պետք է փնտրել Ոսկանի կողմից օգտագործված Վուլգատայում: Մենք տեսնում ենք, որ Վուլգատայում վերահիշյալ անունները գրված են Salomon և Babylon ձևերով, ուստի կարծում ենք, որ այս հարցում դժվար չէ եզրակացնել, որ Ոսկանը այդ և այլ բաղմաթիվ անուններ բերել է լատիններեն արտասանության ձևով: Անշուշտ մեր ասածներով չեն ավարտվում Ոսկանի Աստվածաշնչի լեզվական յուրահատկությունների վերաբերյալ մեր դիտողությունները, սակայն նկատի ունենալով տեղի սղությունը, մենք բավարարվում ենք այսքանով:

Այժմ ցանկանում ենք կանգ առնել Ոսկանի կողմից արքայական Աստվածաշնչում արված սրբագրությունների վրա և որոնք հարմար ենք գտնում ներկայացնելու առանձին խմբերով:

ա. Տառային և բառային սրբագրություններ և կամ հավելումներ

Արքայական Աստվածաշնչի Հին Կտակարանի սկզբից մինչև վերջի էջում կան Ոսկանի ձեռքով արված տառային ուղղումներ և մասամբ հավելումներ, ինչպես նաև երբեմն՝ կրճատումներ: Սակայն այս բոլորի թիվը այնքան մեծ է, որ մենք անհրաժեշտ չենք գտնում այստեղ նրանց էջահամարները բերելու: Ոսկանը Հին Կտակարանի բնագրում նույն թանաքով կատարել է նաև բառային հավելումներ, որոնցից այստեղ ցույց ենք տալիս 1—4 բառ ընդգրկող հավելումների էջերը:

Ոսկան Երեւանցու կողմից արքայական Աստվածաշնչում կատարված բառային հավելումները

3ա, 5, 9բ, 10ա, 11բ, 12բ, 15ա, 17, 19, 20, 21ա, 22ա, 22բ, 24, 26ա, 33բ, 34ա—35ա, 41բ, 42բ, 44բ, 46ա,

33ա, 34բ, 57, 56ա, 64բ, 104ա—105բ, 107ա, 109բ, 110բ, 111բ, 112ա, 122բ, 12օբ, 122ա, 135բ, 142ա, 148բ, 169ա, 173բ, 179, 182բ, 187բ, 193ա, 204ա, 205բ, 209բ, 211, 212բ, 213բ, 214ա, 232ա, 254բ, 255բ, 256բ, 258ա, 261ա, 262, 267ա, 273ա, 275, 276, 303բ, 304բ, 309բ, 313ա, 327, 344բ, 349բ, 351բ, 352ա, 3օ3բ, 384բ, 387, 394, 401ա, 405ա, 410, 412բ, 417բ, 421ա, 422բ, 427, 433ա, 436բ, 437ա—438ա, 443ա, 450ա:

Ուշագրավ է այս առթիվ նշել, որ Ոսկանը ձեռագրում իր կատարած հավելումները արել է իրեն հատուկ այն նույն ուղղագրական կանոններով, որի մասին առիթ ունեցանք վերևում խոսելու: Օրինակները բաղմաթիվ են, այդ կտեսնենք, երբ կխոսենք ընդարձակ հավելումների մասին:

Ձեռագրի 107ա էջի (Գիրք Յեսուայ որդւոյ Նաւեայ, գլուխ ԻԴ) ստորին լուսանցքում իրեն 5-րդ տնահամար դրված է Ոսկանի հետևյալ հավելումը. «Եւ աւաւեցի զՄօսէս և զԱհարօն»: Այստեղ ուշագրավը ոչ միայն հավելումն է և նրա ոսկանյան ուղղագրությունը, այլև այն, որ թեև հիշյալ հավելումը կար Վուլգատայում և ինչպես նրա մյուս հավելումները, այնպես էլ այս պետք էր որ մուտք գործեր տպագրում, այնուամենայնիվ այն դուրս է մնացել Ոսկանի Աստվածաշնչից: Անշուշտ այն պատճառով, որ բնագրի տվյալ տեղում գրաշարի ուշագրությունը հրավիրող նշան մոռացվել էր գրվել:

բ. Ընդարձակ հավելումներ

Ոսկան Երեւանցին Վուլգատայի հետ իր օրինակը համեմատելու ընթացքում կատարել է գրչագրում մի շարք ընդարձակ հավելումներ, որոնք հետո մուտք են գործել իր Աստվածաշնչում: Իբրև նմուշ ստորև բերելով նման հավելումներից մի քանիսը, նախ տալիս ենք հավելմանը նախորդող և ապա հավելումին հաջորդող բառերը, իսկ նրանց միջև փակագծերում շղատառով բերում ենք Ոսկանի հավելումը ձեռագրում, և ապա հիշյալ պարբերությունը իր ամբողջությամբ Ոսկանի Աստվածաշնչից, դարձյալ շղատառով ընդգծելով մուտք գործած հավելումը: Սույն հավելումները չկան մեզ ծանոթ հայկական Աստվածաշնչերում և ոչ էլ Զոհրայանի և Բագրատունու հրատարակություններում: Վերջում փակագծերի մեջ նշում ենք տվյալ հավելմանը համապատասխանող Վուլգատայի էջերը:

Հերթում Բ-ի ձեռագիր Աստվածաշունչ

Էջ 40ր ելի Ի՛ է 12—13.

«... և խարխիսը նոցա տասն: [Նոյնով լայնութեամբ սրահին որ հայի բնդ տրեկիս յիսուն կանգնող եղիցին] և ի հինգհոսասան կանգնող...»:

Էջ 289ր, Ուալմ. ԺԳ 3.

«Ոչ որ է որ առնէ զբարի և ոչ որ է մինչև ի մի: Գերեզման բաց է կոկորդ նոցա լեզուով իւրեանց նենգաւոր եղեն, բոյնի իմից ի ներքոյ շրթանց նոցա: Որոց բերան անիծիւ և դառնութեամբ լի են. ետարբեն ռոտ նոցա հեղուլ զարին: Բեկումն և բշտառութիւն ի նաւապարհս նոցայ և զնաւապարհս խաղաղութեան ոչ ծանեան, ոչ է երկիւղ Աստուծոյ առաջի աշաց նոցա: Ոչ ծանիցեն ամենեքեան...»:

Էջ 374ր, Եսայի, Խն 4—6.

«... և զու գիս ոչ ծանեար թէ ես եմ տէր Աստուած և չիք այլ որ: [Ես տէր՝ և ոչ գոյ այլ բաց յի՛նէն ոչ գոյ Աստուած զգօտի ածի Բեզ և ոչ ծանեար գիս: Զի գիտասցեն սոքա՝ որք յարեկից և որք յարեմտից գի բաց յի՛նէն այլ ոք ոչ գոյ]: Ես եմ որ հաստատեցի...»:

Ընդարձակ հավելումներ կան նաև Ա. Մնացորդացի, Հուդիթի, Իմաստութեան, Երեմիայի մարգարեության, Բարուքի թղթում և այլ գրքերում:

գ. Բնագրային կրճատումներ

Թեև Ոսկանը առաջարկում իր խոստացածի համաձայն պահպանել է հայկական Աստվածաշնչի այն բոլոր հատվածները, որոնք չկային Վուլգատայում, սակայն այնուամենայնիվ համեմատությունից պարզվում է, որ բացի բազմաթիվ հավելումներից, նա կատարել է նաև բնագրային կրճատումներ: Բերենք մի օրինակ. Սաղմոսաց գրքի ՃՄ սաղմոսին հաջորդող ամենավերջի 7 տնահամարից բաղկացած սաղմոսը, որը սկսում է «Փոքր էի ես յեղբարս իմ...» և վերջանում է «և բարձի զնախատինս յորդոցն Իսրայելի» բառերով և որը կա Հեթումի Աստվածաշնչում (318), ինչպես նաև մեր հնագույն ձեռագիր Աստվածաշնչերում և Զոհրապյանի և Բագրատունու հրատարակություններում, Ոսկանը իր հրատարակությունից դուրս է թողել, անշուշտ հետևելով Վուլգատային, քանի որ այնտեղ ևս հիշյալ սաղմոսը չկա:

Ոսկանյան Աստվածաշունչ

Էջ 84.

«... և խարխիսը նոցա տասն: Նոյնով լայնութեամբ սրտին որ հայի բնդ տրեկիս՝ յիսուն կանգնող եղիցին, եւ ի հնգհոսասան կանգնող...»:

(Հմտ. Biblia Sacra Vulgatae... p. 135.)

Էջ 11—32.

Ոչ որ է՝ որ առնէ զբարի, և ոչ որ է՝ մինչև ի մի: Գերեզման բաց է կոկորդ նոցա. լեզուով իւրեանց նենգաւոր եղեն. բոյնի իմից ի ներքոյ շրթանց նոցա: Որոց բերան անիծիւ և դառնութեամբ լի են. ետարբեն ռոտ նոցա հեղուլ զարին. բեկումն և բշտառութիւն ի նաւապարհս նոցայ, և զնաւապարհս խաղաղութեան ոչ ծանեան, ոչ է երկիւղ Աստուծոյ առաջի աշաց նոցա: Որպէս ոչ ծանիցին ամենեքեան...»

(Հմտ. Biblia Sacra Vulgatae... t. II, p. 274.)

Էջ 224.


«... և զու գիս ոչ ծանեար թէ ես եմ Տէր Աստուած և չիք այլ որ: Ես տէր՝ և ոչ գոյ այլ. բաց յի՛նէն ոչ գոյ Աստուած. զգօտի ածի Բեզ՝ և ոչ ծանեար գիս: Զի գիտասցեն սոքա՝ որք յարեկից՝ և որք յարեմտից՝ գի բաց յի՛նէն այլ ոք ոչ գոյ: Թէ ես եմ Տէր Աստուած եւ չիք այլ որ: Ես եմ որ հաստատեցի...»:

Մնթ. Բե՝ սկզբում և թե՛ վերջում նույն բառերն է տպել, սխալը ծագել է նրանից, որ հավելման նշանը գրել է սխալմամբ «Թէ ես եմ» բառի վրա: (Հմտ. Biblia Sacra Vulgatae... t. III, p. 60.)

դ. Բնագրային համեմատություն


Սույն հատվածում կանգ կառնենք Մնացորդ գրքի որոշ մասերի համեմատության վրա: Առաջին հերթին կնշենք այն տարբերությունները, որ գոյություն ունեն արքայական Աստվածաշնչի և ոսկանյան հրատարակության միջև: Միաժամանակ Ձ=Ո ձևով կնշենք նաև այն հատվածները, որոնք ձեռագրում և ոսկանյան հրատարակությունում համընկնում են իրար: Բացի դրանից որպեսզի կարողանանք պարզել, թե եղած բնագրային տարբերություններից որն է համընկնում մեր ձեռագիր Աստվածաշնչի բնագրին, զուգահեռ ենք անցկացնելու նաև Զոհրապյան. բնական հրատարակության հետ և նշելու ենք այն Ձ համառոտագրություններ: Երբ նշում ենք Ձ=Ձ նշանակում է որ ձեռագիրն ու Զոհրապյանը համընկնում են իրար, իսկ երբ նշելու ենք Ո=Ձ այդ դեպքում Ոսկանն է համընկնում Զոհրապյանին: Որպեսզի պարզ լինի, թե ինչքան շատ են եղող բնագրային տարբերությունները, անհրաժեշտ ենք գտնում ասելու, որ Մնացորդ գրքի միայն առաջին գլխի մանրակրկիտ համեմատությունը տվեց մեր հաշվումներով շուրջ 17 մեծ և փոքր տարբերություններ: Այստեղից էլ պարզ է, որ եթե նույն մանրակրկիտությամբ համեմատեիլու





Մատենադարան, ձեռ. № 180

(Ա սյունակի մերկի լուսանցքի վրա 7 տողանոց հավելումը Ոսկան Նրևանցուն է)



Մի Էջ Ոսկան Երևանցու Աստվածաշնչից
(Ձախ սյունակում պաշենրով ճշանակված մասը ճախորդ ճկարում երևացող՝ Ոսկանի 7 տողանոց
նալկումն է)

լինենք Մենդոց գրքի 50 գլուխները, ինչ լափերի կարող էր հասնել մեր սույն ցուցակը: Էլ չենք խոսում բովանդակ Հին Կտակարանի համեմատության մասին: Ուստի բավականանում ենք միայն Մենդոց գրքի տարբեր գլուխների պատկանող մի շարք բնագրերի համեմատությամբ:

Մենդ. Ա. 26.—Ձ «և իշխեսցեն ձկանը ծովում: Ուն ձեռագրի վրա իշխեսցեն բառի և տառը շնչել է, իսկ Լ-ն դարձրել է է և տպագրել է. «և իշխեսցէ ձկանը ծովում: Ձ=Ձ»:

Բ. 12.—Ձ=Ո «և անդ է ակն սուտակ և դահանակ», Ձ «և անդ է սուտակն և ակն դահանակ»:

Դ. 16.—Ձ=Ձ, «Տրտմութեամբ ծնցես», Ո-ը ձեռագրի լուսանցքում ուղղել և տպագրել է. «Տրտմութեամբ ծնցես»:

Գ. 24.—Ձ «և հան զԱղամ»: Ո-ը Ձ-ում ավելացրել է է և տպագրել «և էհան զԱղամ»: Ձ «և հան զԱղամ»:

Դ. 4.—Ձ=Ձ, «Ած և Հարէլ», Ո-ը Ձ-ում ավելացրել է է և տպագրել «էած և Հարէլ»:

Դ. 21.—Ձ=Ո «սն էր հայր որ», Ձ «սն է հայր որ»:

Դ. 4.—Ձ=Ձ «ՋՍէթ ամբ եւթն հարիւր», Ո-ը ուղղել է և տպագրել «ՋՍէթ ամբ ութն հարիւր» (Հմմտ. Biblia Sacra Vulgatae... t. I, p. 7.)

Ե. 32.—Ձ=Ո, «Ամաց հինգ հարիւրոց», «Ձամաց հինգ հարիւրոց»:

Ե. 26—27.—Ձ «Եւթն հարիւր և երկու», Ո=Ձ, «Եւթն հարիւր ութսուն և երկու», Ո-ը Ձ-ում ավելացրել է ութսուն բառը:

Զ. 1.—Ձ=Ձ, «Իբրև սկսաւ մարդիկն բազմանալ», Ո-ը սկսաւ բառի ւ փոխել է ն-ի և տպագրել է «Իբրև սկսան մարդիկն բազմանալ»:

Ձ. 4.—Ձ=Ձ, «Սկայք էին ի վերայ երկրի», Ո-ը սկզբում ավելացրել է Հ «Հսկայք էին ի վերայ երկրի», սակայն շարունակության մեջ հիշյալ բառի կրկնօրինակը բնագրի նման հրատարակել է «սկայք» ձևով:

Ձ. 7.—Ձ=Ո, «Ջնչեցից զմարդն զոր արարի», Ձ «Ջնչեցից զամենայն մարմին զոր արարի»:

Ձ. 20—21.—Ձ=Ձ, «Մտանիցեն առ քեզ կերակրել ընդ քեզ արու և էգ», Ո-ը շնչել է Ձ-ը և վրան գրել ու ապա տպագրել, «Մտանիցեն առ քեզ զի կեցցեն» (Հմմտ. Biblia Sacra Vulgatae... p. 10.)

Է. 11.—Ձ=Ո «Յերկրորդում ամսեանն ի քսան և», Ձ «Եւթներորդում ամսեանն ի քսան և...»:

Է. 8.—Ձ=Ձ, «Վասն չուրցն հեղեղի: Եւ ի թռչնոց սրբոց, և ի թռչնոց, որ ոչ սուրբ էին և յամենայն սողնոց», Ո-ը ավելացրել է Ձ-ում և ապա տպագրել է «Վասն չուրցն հեղեղի և ամենայն անասնոց որ ոչ սուրբ էին և ի թռչնոց սրբոց և ի թռչնոց որ ոչ սուրբ էին և յամենայն սողնոց» (Հմմտ. Biblia Sacra Vulgatae... p. 10.)

Թ. 2.—Ձ=Ո, «Տէր տէր զինչ տացես ինձ զի», Ձ «Տէր տէր զինչ արասցես ինձ զի»:

Թ. 19.—Ձ=Ձ, «Մնցի քեզ որդի և հաստատեցի», Ո-ը ավելացրել է Ձ-ի լուսանցքում և ապա տպագրել է հետևյալ հավելումով. «Մնցի քեզ որդի և կոչեսցես»:

զանուն նորայ Իսահակ և հաստատեցի» (Հմմտ. Biblia Sacra Vulgatae... p. 24)

Թ. 16.—Ձ=Ձ. «Աղաչեմ տէր», Ո-ը Ձ-ի լուսանցքում ուղղել և տպագրել է «Աղաչեմ տեարք իմ»:

Ի. 39.—Ձ=Ձ, «Ի վերուստ», Ո-ը Ձ-ի լուսանցքում ավելացրել է «Եղիցի օրհնութիւն քո» բառերը և տպագրել «Ի վերուստ եղիցի օրհնութիւն քո» (Հմմտ. Biblia Sacra Vulgatae... p. 45)

Լ. 32.—Ձ=Ձ, «Եղիցին վարձք», Ո-ը Ձ-ում ավելացրել է իմ բառը և տպագրել «Եղիցին վարձք իմ»:

Լ. 47.—Ձ=Ձ, «Կարկառ վկայ», Ո-ը Ձ-ի լուսանցքում ավելացրել է և ապա տպագրել «Կարկառ վկայս իւրաքանչիւր ըստ յատկութեան լեզուի իւրոյ» (Հմմտ. Biblia Sacra Vulgatae... p. 53.)

Լ. 21.—Ձ=Ձ, «Որեարն այն խաղաղութեամբ են», Ո-ը Ձ-ի լուսանցքում ուղղել և տպագրել է, «Արքայն այնքան խաղաղութեամբ են»:

Լ. 14.—Ձ=Ձ, «Ուր խօսեցաւ ընդ նմա», Ո-ը ավելացրել և տպագրել է. «Ուր խօսեցաւ ընդ նմա Աստուած»:

Լ. 3.—Ձ «Յղեցաւ ծնաւ», Ո=Ձ, «Յղացաւ և ծնաւ» (Ո «Ուր յղացաւ և ծնաւ»):

Խ. 7.—Ձ=Ձ, «Ընդէ՛ր խաւիցի տէր այդպիսի բանս», Ո-ը Ձ-ի լուսանցքում ավելացրել է մեր բառը և տպագրել է. «Ընդէ՛ր խօսիցի տէր մե՛ւ այդպիսի բանս» (Հմմտ. Biblia Sacra Vulgatae... p. 76.)

Խ. 10.—Ձ=Ո, «Մինչև եկեսցեն նմա հանդերձեալքն», Ձ «Մինչև եկեսցէ նա որոյ իւրն է հանդերձէ արքն»:

Խ. 25.—Ձ=Ձ, «ՅԱստուծոյ հօրն քոյ, և օգնեաց քեզ Աստուած իմ և օրհնեաց զքեզ յօրհնութիւն երկնից», Ո-ը Ձ-ի «ՅԱստուծոյ» բառի տեղ գրել է Աստուած, նույնպես հօրն բառի վերջի ն տառը հանել է, իսկ քո-ի վերջում ավելացրել է յ և տպագրել է. «Աստուած հօր քոյ օգնեաց քեզ, և Աստուած իմ օրհնեաց զքեզ»:

Վերոհիշյալ համեմատություններից կարելի է պարզել այն, որ թե՛ն Ջոհրապյանի համեմատությամբ ոսկանյան հրատարակությունում եղող շեղումների ճնշող մասը Ոսկանի կատարած փոփոխումների արդյունք էր, ապա և շեղումների մի փոքր մասն էլ Ոսկանին են անցել օգտագործված գրչագրի միջոցով:

Ե. Ոսկան Երևանցի և Վուլգաան.

Ոսկանյան հրատարակությունը անցյալում հաճախ շատ է դատափնտրվել իբրև լատինական Վուլգատայի վրա ձևված գործ: Հայտնի է, որ հայերեն Աստվածաշունչը թարգմանությունների թագուհի կոչող Լակրոզը նկատելով, որ Ոսկանի Աստվածաշունչը Վուլգատային էր հարմարեցված, իսկ Պետրոս Լատինացու 1705 թ. տպագրածն էլ փաստորեն պատճենահանումն էր առաջին հայ տպագիր Աստվածաշնչի, ուստի նա

18-րդ դարի սկզբում ձեռնարկեց հայերեն մի Ավետարանի բնագրի կազմման, որը սակայն անավարտ մնաց և այժմ պահվում է Վիեննայի երբեմն Կայսերական կոչված մատենադարանում⁷²։ Նույնպես Չամչյանն ու Ջոհրապյանը և ուրիշներ մեղադրեցին Ոսկանին իր շեղումների համար և նրա աշխատությունը անվանեցին «այլալված գործ» և կամ «խառնարան»⁷³։ Եթե քննելու լինենք Ոսկանի օգտագործած կանոնը իր բովանդակած բոլոր գրքերի թվով հանդերձ, ինչպես նաև հայկական Աստվածաշնչի բնագրի ամբողջականությունը պահպանելու նրա ձգտումն ու միաժամանակ նրա կատարած փոփոխումները, մեզ թույլ են տալիս ասելու, որ նրա գործը հայկական Աստվածաշունչը Վուլգատայի հետ հաշտեցնելու կամ միաձուլելու տպավորություն է թողնում։

Ոսկանի շեղումների մասին հաճախ առիթ ունեցանք ակնարկելու, երբ նրա հրատարակությունը համեմատության մեջ դրեցինք իր օրինակի և Ջոհրապյան հրատարակության հետ։ Արդ, օգտվելով առիթից ցանկանում ենք խոսել մի հարցի շուրջ, որին բանասիրության մեջ գրեթե չեն անդրադարձել։ Ի՞նչն էր Ոսկան վարդապետ Երեանցու կողմից իր Աստվածաշնչի հրատարակության մեջ թույլ տված զիջումների պատճառը։

Կարծում ենք, որ այդ միայն տվյալ ժամանակաշրջանում հայ մշակույթի գործիչների մոտ, այդ թվում և Ոսկանի մոտ, դեպի լատիներենը առաջացած մեծ հետաքրքրասիրության արդյունք էր և ոչ էլ իր հրատարակելի Աստվածաշունչը ժամանակի լավագույն և ամբողջական Ս. Գրքերի աստիճանին բարձրացնելու միտումն էր միայն, այլ բացի հիշյալ պատճառներից պետք է հետևեցնել, որ Ոսկանի կողմից Վուլգատայի առնչությամբ կատարած զիջումները պայմանավորված էին նաև հույժ կարևոր այլ հանգամանքներով ևս։

Պետք է նշել, որ նախապես, երբ Ոսկանը նախապատրաստվում էր Աստվածաշնչի հրատարակությանը և Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի հրամանով որդեգրում էր Վուլգատայի գլխաբաժանումները, տնատումները և տնահամարներն ու վկայությունները, բացառված չէր նաև կաթողիկական մի երկրում այն տպագրելու հնարավորությունը, և ուր ինչպես հայտնի է հայ-եկեղեցու հատուկ

գրքերի վերաբերյալ գոյություն ունեի խիստ գրաքննություն։ Արդ, Ոսկանը բացի Վուլգատայի համաձայն իրեն առաջադրված արտաքին մոժումներից, նա սկսեց բառացի կերպով համեմատել նաև հայերեն Աստվածաշունչի ոսկեղենի բնագիրը և սրբագրեց այն դարձյալ Վուլգատայի հետևությամբ։ Սակայն երբ Ոսկանը այնքան ցանկացված գործը պետք էր լույս ընծայեր կաթողիկական աշխարհի համար «հերձվածող» համարված բողոքական Հոլանդիայում, պարզ է, որ նրա այս հրատարակությունը հայտնի պատճառներով Պրոպագանդայի շրջանակներում ավելի մեծ կասկածանքի առիթ էր պատճառելու։

Ուստի Ոսկանի նման գործիչը այդ բոլորը նկատի չառնել չէր կարող, բացի այդ, նրա մեծ մտասեւեռումն էր նաև իր հրատարակելի Աստվածաշունչը սեփականությունը դարձնել հայության անխտիր բոլոր հատվածներին, այդ թվում՝ տարածել նաև հայ կաթողիկեների շրջանում։ Ինչպես նշում է բանասեր Ա. Սարուխանը, տվյալ ժամանակաշրջանում հայ կաթողիկեները «աննշան չէին որպես թվով նույնպես և աղքատացած»⁷⁴։

Հայտնի է, որ հայկական գաղթավայրերում սկսած Իտալիայից մինչև Լեհաստան, այնտեղից էլ հասնելով մինչև Նախիջևան և այլ վայրերում բավական մեծ թվով կաթողիկ հայ ազգաբնակչություն էր ապրում և որոնք կարևոր դիրք էին գրավել։ Ահա հիշյալ պատճառները նկատի ունենալով էր, որ Ոսկանը, մեր կարծիքով, ստիպվեց նախօրոք արած զիջումները իր հրատարակելի Աստվածաշունչում պահպանել նաև Ամստերդամում։

Մեր սույն կարծիքի օգտին է խոսում այն վիաստաթուղթը, ըստ որի Աստվածաշնչի տպագրության ավարտման տարին (1668 թ. հոկտեմբերի 22-ին) Ոսկանը ցանկանալով կաթողիկ հայերի միջև ևս տարածել սույն հրատարակությունը, որոշեց ստանալ Հռոմի բարեհաճությունը։ Նրա խորհրդատուն Ամստերդամում պապի նվիրակ Հովհաննես Եպիսկոպոսն էր, որը և ընդառաջելով Ոսկանին, վերոհիշյալ թվականով մի նամակ գրեց «Հավատո Տարածման Ժողովի» քարտուղարին։ Ոսկանը իր Հռոմ գնալը անհարմար համարելով (քանի որ իր առաջի գնալը ձախողանքով էր ավարտվել) իր տեղը ուղարկեց իրեն օգնական Կարապետ վարդապետին, որը իր հետ տարավ նաև նորատիպ Աստվածաշնչի մի օրինակ, Ս. Ժողովի քննությանը և հավանությանը ներկայացնե-

⁷⁴ Առաջիկա Մարտին. Հոլանդացի և Հայերը ԺՁ-ԺԹ դարերում, Վիեննա, 1926, էջ 81։



⁷² Հ. Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Կայսերական Մատենադարանին ի Վիեննա, էջ 34։

⁷³ Հ. Մ. Չամչյան, Նշված աշխատությունը, էջ 660 և Ջոհրապյանի հրտ. Աստվածաշունչը, առաջաբան, էջ 8։

լու համար: Հիշյալ հանձնարարագրում գրված էր, որ նամակաբեր Կարապետ վարդապետը «Ս. Աթոռին է ուղարկված հայ եպիսկոպոս Ոսկանի կողմից, հայերեն լեզվով Ամստերդամում իր տպած Ս. Գիրքը վավերացնել տալու համար, որպեսզի առաքելական հավանության կնիքով օժտվի և Հռոմեական Եկեղեցուն միացած հայերն էլ առանց մոլորության վտանգի կարենան կարդալ»⁷⁵:

Արդյունքների մասին մենք ոչինչ չգիտենք, սակայն կարծում ենք, որ առաջիկայում վատիկանի դիվանում այս առումով կատարվելիք պրպտումները կարող են նոր լույս սփռել սույն խնդրի հետագա զարգացման պատմության վրա: Համենայն դեպս Ոսկան Երևանցու նպատակը շատ մեծ էր և հաջողության դեպքում այն կունենար համահայկական խոշոր նշանակություն և հայերեն անդրանիկ Աստվածաշնչի տարածման միջոցով հնարավոր կլիներ հայ գրի հետ կապել հայկական մի շարք բաժանբաժան գաղթավայրերում ձուլման ենթակա եղող և մեծ թիվ կազմող դավանափոխ հայորդիների: Սակայն հակառակ Ոսկանի կողմից արված հիշյալ բոլոր զիջումներին, նրա Աստվածաշունչը Հռոմում հաջողություն ունենալ չէր կարող: Մեր ասածը հիմնավորելու համար հենվում ենք երկու կարևոր փաստերի վրա: Առաջինը. Ոսկանի տպարանը Լեհաստան տեղափոխելու հայտնի պատմությունն է, որը մեծ ուրախություն պատճառեց կաթոլիկ անվանի քարոզիչներ Պիդոլին և Գալանոսին, որոնք կարծում էին, որ «հնար լինէր խափանելու զառիթ բաղում շարեացն»⁷⁶, և այդպիսով ծրագրում էին նրան խանգարել «հերձվածողական» գրքեր տպելուց և շեղել իր հայրենասիրական աշխատանքներից: Թե ինչքան էին Ոսկանի գործունեության նկատմամբ ատելություններ լցված լվովի քարոզիչները, այդ հավաստի երևում է նաև այն փաստից, որ երբ հետագայում հայ տպագրիչի օգնական Թադեոս քահանա Համազասպյանը Լվով էր ժամանել Ոսկանի գրքերը այնտեղ վաճառելու նպատակով, հիշյալ քարոզիչները նրան արգելեցին որևէ գիրք ծախելու: Նրանք պատճառաբանում էին այդ դրելով, որ «Քանզի էին ի մատենին բանք բազումք անպատշաճք զլատինացուց և զհոռվմեական հաւատոց, այլև գովութիւնք ուռուցիկք վասն այ-

լադաւան Հայոց»⁷⁷: Եվ երկրորդ. երբ Ոսկան Երևանցու մահից հետո Մարսելում վերջինիս քրոջ որդին՝ Սողոմոն Լևոնյանը ցանկացավ նորից հրատարակել հիշյալ Աստվածաշունչը, լատին հայազգի քննիչ Թովմաս Հայրապետյանը նախապես պահանջեց, որ հայերեն Աստվածաշունչը սրբագրվի ճիշտ և ճիշտ լատիներենի համաձայն⁷⁸, մի բան, որը անշուշտ տեղի չունեցավ, քանի որ Մարսելում այլևս լույս չտեսավ Ոսկանի Աստվածաշունչը:



Ավարտելով սույն հոդվածը, նախորդ էջերում քննարկվող նյութերը կարող ենք ամփոփել հետևյալ կերպով:

Ոսկանյան Աստվածաշնչի օրինակի հարցը թեև երկար տարիներ շարունակ բանասիրության մեջ թեր ու դեմ կարծիքների տեղիք էր տվել և մինչև վերջերս էլ այն դեռևս վերջնական ճշգրտման չէր ենթարկվել, սակայն նկատի առնելով մեղ հայտնի փաստարկումները և Ոսկանի հիշատակարանները կարելի եղավ ապացուցել, որ Ոսկանը իրեն իր տպագրության հիմք է օգտագործել 1295 թ. Հեթում Բ հայոց թագավորի պատվերով գրված Աստվածաշունչը, և ոոհ վրա էլ տպագրողը կատարել է իր կողմից անհրաժեշտ համարված սրբագրությունները: Այդ՝ Մատենադարանի № 180 ձեռագիրն է:

1668 թ. Ոսկանի տպագրած նոր Կտակարանի օրինակը, ինչպես երևում է նրա հիշատակարանից, դարձյալ եղել է Հեթում Բ-ի Աստվածաշունչը, միայն այն տարբերությամբ, որ եթե Հին Կտակարանի մասի սրբագրությունները կատարվել են ուղղակի գրչագրի վրա, ապա նոր Կտակարանի համար նա կատարել է հատուկ ընդօրինակություն, որտեղ էլ արել է իր սրբագրությունները: Այսպիսով Ոսկանը պետք է որ Ամստերդամ տարած լիներ երկու ձեռագիր, որոնց աղբյուրը սակայն եղել է մեկը՝ Հեթում Բ-ի Աստվածաշունչը:

Հեթում Բ-ի հիշյալ Աստվածաշունչը մեկն է մեր լավագույն այն գրչագիրներից, որը հասել է մեզ: 17-րդ դարի սկզբում այն Տիգրանակերտում փրկվելուց և Կ. Պոլսում կազմվելուց հետո, 1656 թ. Կաբինում նրա տերն է դարձել Հովհանավանքի վանահայր Զաքարիա եպիսկոպոսը: Վաղարշապատցին, որը և իր Շոշում գրել տված Աստվածաշնչի (ավարտված 1660 թ.) ու բովանդակ իր ունեցվածքի հետ կտակել է Հովհանավանքին:

⁷⁵ Arch. des Propaganda Rome, Scrittura refartite in S. Congr. Vol. 419. fol. 315. հմտ. Ա. Սարգսյան, նշված աշխատությունը, էջ 81—82:

⁷⁶ «Բռնի միութին Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցույն Հռովմայն, Պետերբուրգ, 1884, էջ 45—46:

⁷⁷ Նույն տեղում, էջ 215—216:

⁷⁸ Առ, Հայոց պատմություն, Գ, էջ 460:

Ոսկանը իբրև Ուշիի Ս. Սարգիս վանքի վանահայր, լինելով Հովհանավանքի անմիջական հարևանություն մեջ, հիշյալ ձեռագրերը նվիրաբերող Զաքարիա Վաղարշտպատցու մահից հետո (1659 թ.) մինչև իր Ամստերդամ մեկնելը (1662 թ.) հնարավորություն պետք է ունեցած լիներ մոտիկից ուսումնասիրելու նշված դրագրերը։ Նրանցից Հեթում Բ-ի Աստվածաշունչը սրբագրեց իր տպագրության համար, իսկ երկրորդը՝ հիշատակեց իբրև Ղազար Վաղարշացու Աստվածաշնչից Շոշում կատարված ընդօրինակություն։ Վերջինս Մատենադարանի 201 համարը կրող գրագիրն է։

Պետք է հետևել, որ Ոսկանի և Պիրոմալիի կողմից նախապես կատարված սրբագրությունները, հետագայում նկատի առնվեցին Ոսկանի կողմից արքայական գրագրի վրա իր կատարած խմբագրական վերջնական աշխատանքների ընթացքում։

Արքայական Աստվածաշնչի համեմատությունը ոսկանյան հրատարակության հետ և առկա վերջինիս համեմատությունը լատինական Վուլգատայի հետ դարձյալ խոսում է այն փաստի օգտին, թե Ոսկանի Աստվածաշնչի օրինակը եղել է Հեթումի դրագիրը։ Ոսկանը թարգմանեց միայն այն գրքերը, որոնք չկային իր օրինակում, իսկ վերջինիս համեմատությամբ իր թույլ տված շեղումները կատարեց հետևելով Վուլգատային։

Հակառակ բանասիրության մեջ տիրող այն կարծիքի, թե իբրև Ոսկանը Ղազար Բաբրդացու Աստվածաշնչի վերջում գտնվող ցանկը պատրաստի կցել էր իր հրատարակության վերջում, երկու ցանկերի քննարկումը, սակայն, պարզում է, որ Ոսկանը թեև հետևել է Ղազարի օրինակին և հարմար է նկատել նման մի ցանկի առկայությունը նաև իր հրատարակության մեջ, սակայն նուրից է այն թարգմանել լատիներենից։

Արքայական ձեռագրի էջերում հետագայում արված մեծ թվով հավելումները, որոնք բոլորն էլ ապա նկատի են առնված ոսկանյան հրատարակության մեջ, ոչ միայն աներկբայելիորեն հաստատում են, որ հիշյալ գրագիրը իր բոլոր նշումներով հանդերձ եղել է Ոսկանի Աստվածաշնչի օրինակը, այլ միաժամանակ ապացուցվում է նաև, որ ձեռագրի հիշյալ նշումները պատկանում են Ոսկան Երևանցուն։

Համեմատությունները ցույց տվեցին նաև, որ Ոսկանի գլխավորությունը ոչ թե տեղ-

տեղ դասավորման անկանոնություններ ունի, ինչպես կարծել էր վերջերս ուսումնասիրողներից մեկը, այլ որ նա նկատելով հայերեն բնագրի մի մասի հետ-առաջությունները, Վուլգատայի հետևողությամբ ճշգրտել է և պահպանելով հայերենի շարակարգությունը փոխել է միայն նրանց գլխահամարները։ Այդ ճշգրտմանը ապա հետևել են Զոհրադյանն ու Բագրատունին։

Ոսկանյան հրատարակության խորագրերի և նրանց երրայնցերեն անվանումների աղբյուրը հիմնականում եղել է Վուլգատան։

Բնագրային համեմատություններից պարզվում է նաև, որ եթե Ոսկանի մոտ հայկական Աստվածաշնչի բնագրից եղող շեղումների մեծ մասը հետևանք էր իր սրբագրությունների, ապա շեղումների մի փոքր մասն էլ Ոսկանին անցել էր իր դրագրից։

Ոսկանի կողմից Վուլգատայի նկատմամբ արված դիտումները հիմնականում հետապնդում էին նման միջոցներով հրատարակելի Աստվածաշունչը անխոցելի դարձնել կաթոլիկական միջավայրում և այն տարածել նաև հայ կաթոլիկների մոտ։ Այսպիսով, Ոսկան Երևանցու տպարանական գործունեությունը չէր սահմանափակվում միայն Հայաստանում մթության և արյան մեջ տառապող իր եղբայրներին օգնության ձեռք մեկնելու, այլև ընդգրկում էր ավելի լայն շահեր և նպատակ ունեւ սատարել ծովման վտանգին ենթակա եղող հեռավոր հայ գաղթավայրերում տվյալոդ հալ բեկորների հայապահպանման վսեմ գործին։

Ոսկանյան Աստվածաշնչի լույս ընծայումը տվյալ ժամանակաշրջանի հայ իրականության և հայ տպագրության պատմության համար խոշորագույն երևույթ էր և այն ամենից առաջ արգասիք էր հայ մեծ երախտավոր Ոսկան Երևանցու երկաթյա կամքի, համառ ու քրտնաջան մաքառումների և աննկարագրելիորեն ծանր ու մաշեցնող աշխատանքների։

Ժամանակը հաճախ լավագույն դատավորն է հանդիսանում անցյալի ժառանգության։ Եվ իսկապես, այսօր թեև 300 տարի է անցնում հայ անդրանիկ տպագիր Աստվածաշնչի հրատարակումից, սակայն հայ ժողովուրդը, ինչպես Մայր Հայրենիքում, այնպես էլ ի սփյուռք աշխարհի միահամուռ կերպով մեծարում է այն տպագրող մեծ երախտավորին՝ Ոսկան վարդապետ Երևանցու պայծառ հիշատակը։

